

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ**

**ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ**

**ՈՐՈՇՈՒՄ N 62/7**

01-ը հոկտեմբերի 2022 թվականի

**Դեկորատիվ-կիրառական արվեստ (021401.00.6) կրթական ծրագիրը  
հաստատելու մասին**

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 5-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

- 1 Հաստատել Դեկորատիվ-կիրառական արվեստ (021401.00.6) կրթական ծրագիրը համաձայն հավելվածի:
- 2 Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ԵՊՀ ԻՄ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

**Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ**

Հավելված

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
ԻԶԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ**

**«ԴԵԿՈՐԱՏԻՎ-ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍ» ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ**

**Ծրագրի մասնագիրը (սպեցիֆիկացիան)**

<b>1. Ծրագրի անվանումը և մասնագիտության թվանիշը</b>	Դեկորատիվ-կիրառական արվեստ 021401.00.6
<b>2. Բուհը</b>	Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ
<b>3. Ծրագիրը հավատարմագրված է</b>	-
<b>4. Շնորհվող որակավորումը</b>	Արվեստի բակալավր
<b>5. Ծրագրի մեկնարկի ուսումնական տարին</b>	2022/23
<b>6. Ուսումնառության լեզուն</b>	Գրական հայերեն
<b>7. Ուսուցման ձևը</b>	Առկա

<b>8. Ծրագրի ընդունելության չափանիշները</b>
Դիմորդը պետք է ունենա. <ul style="list-style-type: none"><li>• Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության վկայական,</li><li>• Կամ նախնական մասնագիտական կրթության վկայական, որում կա գրառում դիմորդի՝ միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն ստանալու վերաբերյալ,</li><li>• Կամ միջին մասնագիտական կրթության վկայական,</li></ul> Դիմորդը հանձնում է ընդունելության քննություններ հետևյալ առարկաներից՝ «Գծանկարչություն», «Կոմպոզիցիա»: Ընդունելությունը կատարվում է ԵՊՀ ԻՄ-ում հանձնած ընդունելության քննությունների արդյունքների հիման վրա:

<b>9. Ծրագրի նպատակները</b>
<ul style="list-style-type: none"><li>• Պատրաստել բարձր որակավորման բակալավր-մասնագետներ, ովքեր տիրապետում են դեկորատիվ-կիրառական արվեստի գեղարվեստակատարողական մեթոդներին և ունեն ստեղծագործական մտածելակերպ:</li><li>• Ուսանողների համար ապահովել կրթական միջավայր և տեսական և գործնական դասընթացների շնորհիվ շրջանավարտների մոտ ձևավորել գիտելիքներ, կարողություններ և հմտություններ, որոնք անհրաժեշտ են մասնագիտական ոլորտում հաջողությունների հասնելու, ուսանողների ստեղծագործական, գեղագիտական, ինտելեկտուալ և վերլուծական կարողությունների զարգացման համար:</li></ul>

<b>10. Ծրագրի կրթական վերջնարդյունքները</b>
<b>Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն</b> <i>Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.</i> <b>Ա1.</b> Նկարագրելու հայ, համաշխարհային և դեկորատիվ-կիրառական արվեստի զարգացման կարևոր պատմական փուլերը և դրանց օրինաչափությունները, դասակարգելու և համեմատելու տարբեր ժամանակաշրջանների ստեղծագործությունները: <b>Ա2.</b> Ճանաչելու արվեստի ակնառու գործիչների ստեղծագործությունները և դասակարգելու ըստ արվեստի տեսակների և ժանրերի: <b>Ա3.</b> Բացատրելու ԴԿԱ (գործվածքի, մետաղի, փայտի գեղարվեստական ձևավորման, մանրանկարի, խեցեգործության, տարազի, տիկնիկագործություն, ապակենկարչություն) առարկաների ստեղծման տեխնոլոգիաները և մեթոդները: <b>Ա4.</b> Նկարագրելու թանգարանային աշխատանքը և բացատրելու ցուցահանդեսների կազմակերպման տեխնոլոգիաները: <b>Բ. Գործնական մասնագիտական կարողություններ</b> <i>Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.</i>

**Բ1.** Դեկորատիվ-կիրառական արվեստի առարկաների մակետավորման աշխատանքներում արհեստավարժ կիրառելու քանդակի և պլաստիկ մոդելավորման հնարները:

**Բ2.** Դեկորատիվ-կիրառական արվեստի առարկաների նախագծման և էսքիզավորման աշխատանքներում ցուցադրելու նկարչության հնարները և բացատրելու դրանց ընտրությունը:

**Բ3.** Դեկորատիվ-կիրառական արվեստի առարկաների ստեղծման աշխատանքներում մշակելու և կիրառելու ազգային զարդարվեստի մոտիվները, մեկնաբանելու դրանց իմաստային նշանակությունը:

**Բ4.** Ստեղծելու և վերարտադրելու դեկորատիվ-կիրառական արվեստի առարկաներ՝ ինքնուրույն ընտրելով տեխնիկական և տեխնոլոգիական կատարման եղանակները:

**Բ5.** Հիմնավորելու սեփական կոնցեպտուալ նախագծերի լուծումները:

**Բ6.** Պատճենելու ԴԿԱ (մետաղի, փայտի, գործվածքի գեղարվեստական ձևավորման, մանրանկարի, խեցեգործության) առարկաներ:

**Բ7.** Հիմնվելով ԴԿԱ ոլորտի արդի և հիմնարար գիտելիքների վրա՝ կազմակերպելու սեփական մասնագիտական գործունեությունը:

**Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ**  
*Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.*

**Գ1.** Հայերեն և երկու օտար լեզուներով գրավոր և բանավոր ներկայացնելու մասնագիտական նախագծեր՝ մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը և ցուցաբերելու հաղորդակցման կարողություն՝ հաշվի առնելով դեկորատիվ-կիրառական արվեստում միջմշակութային, սոցիալական ու անձնային փոխազդեցության գործոնները:

**Գ2.** Աշխատելու թիմում, արդյունավետ շփվելու գործընկերների, ղեկավարության և պատվիրատուների հետ, պատասխանատվություն կրելու սեփական և թիմի աշխատանքի արդյունքների և կայացրած որոշումների համար՝ պահպանելով էթիկայի նորմերը:

**Գ3.** Պատասխանատու լինելու սեփական կրթության համար, ինքնուրույն որոշելու հետագա մասնագիտական զարգացման խնդիրները և պլանավորելու սեփական առաջընթացը, ինչպես նաև ներկայանալի լինելու հանրությանը՝ մասնագիտական պորտֆոլիոյի միջոցով:

**Գ4.** Մասնագիտական խնդիրների արդյունավետ լուծման նպատակով իրականացնելու անհրաժեշտ տեղեկատվության որոնում՝ օգտագործելով տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաները:

**Գ5.** Վարելու մասնագիտական գործնական բանակցություններ՝ ցուցաբերելով դեկորատիվ-կիրառական արվեստի կրթական և արտադրական ոլորտային խնդիրները լուծելու կարողություն:

**Գ6.** Կողմնորոշվելու արտակարգ իրավիճակներում և անհրաժեշտության դեպքում ցուցաբերելու առաջին բուժօգնություն:

**11. Ծրագրի ուսումնական պլանը**  
 Կցված է

**12. Ուսումնական պլանի քարտեզը**  
 Կցված է

**13. Տեղեկատվություն գնահատման կարգի վերաբերյալ**  
 «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ, էջ 7-13:

**14. Ապագա կարիերայի հնարավորությունները**  
 «Դեկորատիվ կիրառական արվեստ» կրթական ծրագրի շրջանավարտները կարող են աշխատանքի անցնել կրթության և մշակույթի ոլորտներում, գեղագիտական կենտրոններում, գորգագործության, խեցեգործության, փայտի և մետաղի արտադրամասերում՝ զբաղեցնելով հետևյալ պաշտոնները.

- հետազոտող,
- ուսումնական վարպետներ,
- մասնագետ-խորհրդատուներ,
- վարպետ - մասնագետ,
- գեղագիտական կենտրոնի ուսուցիչ,
- նկարիչ-ձևավորող:

**15. Ուսումնառության օժանդակության ռեսուրսներ և ձևեր (եթե կան)**

Ուսումնառության գործընթացում օգտագործում են հետևյալ օժանդակ ռեսուրսները.

- գիպսե, կավե, պլաստմասե ռեկվիզիտներ նատյուրմորսների համար,
- մոլբերտներ և գծագրական վահանակներ,
- խեցեգործության և քանդակի համար նախատեսված սեղանիկներ,
- մուֆելային վառարան,
- համակարգիչներ,
- գորգագործության և կարպետագործության տորքեր և շրջանակներ,
- մետաղի մշակման լաբորատոր սարքավորումներ,
- փայտի գեղարվեստական մշակման լաբորատորիայի սարքավորումներ,
- պրոյեկտորներ:

**16. Համապատասխան կրթական չափորոշիչները կամ առարկայական կողմնորոշիչ(ներ)ը**

ԵՊՀ ԻՄ «Դեկորատիվ-կիրառական արվեստ» մասնագիտություն

**17. Ծրագրային այլ կողմնորոշիչներ**

ԵԳՊԱ «Դեկորատիվ-կիրառական արվեստ» մասնագիտության կրթական ծրագիր

**18. Պրոֆեսորադասախոսական համակազմին ներկայացվող պահանջներ**

**ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ**

**1. Ընդհանրական կարողություններ**

**Դասավանդման/մանկավարժական**

- Դասընթացի ուսումնական առարկայական ծրագիր կազմելու կարողություն,
- Մեթոդական պատրաստություն դասավանդման, գնահատման ժամանակակից մեթոդների, տեխնոլոգիաների տիրապետում:
- Դասընթացի կրթական վերջնարդյունքների, նպատակների և խնդիրների հստակ գիտակցման ու պարզաբանման կարողություն:
- Ուսանողների ակտիվության խրախուսման և մոտիվացնելու կարողություն:
- Ընդհանուր նպատակ սահմանելու և դրա իրականացման ուղղությամբ ջանքերը համատեղելու հմտություն:
- Ուսանողների հետ անհատական աշխատանք կատարելու կարողություն:
- Ուսանողներին վերլուծական հմտությունները զարգացնելու, փաստերն ու իրողությունները ընդհանրացնելու, երևույթները համակողմանիորեն գնահատելու, տեսական եզրակացություններ կատարելու կարողությունների ներդրման ձգտման առկայություն:

**Հետազոտական**

- Հետազոտական աշխատանքների իրականացման հմտություն:
- Մանկավարժական դիագնոստիկական գործառնությունների տիրապետում:
- Բաց նոր գաղափարների և հեռանկարների համար:
- Ինտերդիսցիպլինար և համալիր հետազոտությունների մեթոդաբանության, մացություն և իրականացման հմտություն:
- Դասավանդման, հետազոտությունների իրականացման ուսումնասիրության մեթոդների ճիշտ ընտրության և կիրառման հմտություն:

**Հաղորդակցման**

- Ուսանողի հետ միջանձնային հարաբերությունների հաստատման և կառուցողական փոխառնչություններ կառուցելու կարողություններ:
- Դասընթացը և դասապրոցեսը պլանավորելու, լսարանը կառավարելու կարողություններ:
- առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

**S2S կիրառություն**

- Բազային համակարգչային (MS Office փաթեթի ազատ տիրապետում՝ Word, Excel, Power-Point) – 4 – հմտություններ:
- Լուսացուցադրություններ պատրաստելու և ներկայացնելու կարողություն (pptx, prezi, canva կամ այլ):

**Այլ**

- Մանկավարժական էթիկայի կանոնների տիրապետում:
- Բարձրագույն կրթության ոլորտի իրավական նորմերի իմացություն և կիրառման կարողություն:

## **2. Մասնագիտական կարողություններ**

- Դասավանդման ոլորտի հիմնախնդիրների և մեթոդաբանական հիմքերի տիրապետում:
- Դասավանդման գործունեության հիմքում ընկած դասընթացի հիմնական հասկացությունների, հայեցակարգային մոտեցումների, տեսակետների սահմանման կարողություն՝ հաշվի առնելով լսարանի առանձնահատկությունները:
- Ուսուցման գործընթացում ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների կիրառման կարողություն:
- Ուսուցման գործընթացում միջառարկայական կապեր ստեղծելու կարողություն:
- Դասավանդվող առարկայի ոլորտում խնդիրներ ձևակերպելու, անհրաժեշտ նյութեր և ուսուցման միջոցներ ընտրելու կարողություն:
- Առցանց ձևերով, լուսացուցադրությունների և այլ եղանակներով ուսումնական նյութեր պատրաստելու և ներկայացնելու կարողություն և հմտություն:
- Ոլորտի մեթոդական առաջավոր փորձի իմացություն և ստեղծագործական կիրառման կարողություն:
- Կրթական ծրագրի վերջնարդյունքներին առարկայական/մոդուլային ծրագրերի վերջնարդյունքները համապատասխանեցնելու կարողություն:

## **3. Ընդհանուր պահանջներ**

### **Գիտական աստիճան և կոչում**

- Որակավորման կամ գիտական աստիճանի առկայություն դասավանդվող առարկայի/մոդուլի ոլորտում:
- Գիտական կոչման առկայություն /ցանկալի է բակալավրատում, պարտադիր՝ մագիստրատուրայի համար / :
- Հետազոտական աշխատանքների առկայություն մանկավարժության կամ դասավանդվող առարկայի/մոդուլի ոլորտում:
- Մասնակցություն հանրապետական և միջազգային գիտաժողովներին:

### **Մանկավարժական փորձ**

- Գիտական կամ մանկավարժական աշխատանքի փորձառություն (նվազագույնը 3 տարի):
- Պաշտոնի անձնագրով զբաղեցող պաշտոնին (դասախոս, ասիստենտ, դոցենտ, պրոֆեսոր) ներկայացվող:
- Մասնակցություն որակավորման բարձրացման դասընթացներին վերջին 5 տարիների ընթացքում:

### **Պրակտիկ աշխատանքի փորձ /ցանկալի է/**

- Մասնագիտական գործունեության փորձառություն:

### **Այլ պահանջներ**

- Առցանց ուսուցման տեխնոլոգիաների տիրապետում:
- Դասապրոցեսը Moodle ծրագրով իրականացում:

Պետք է նկատի ունենալ, որ ծրագրի մասնագիրը տալիս է ծրագրի հիմնական բնութագրերի համառոտ նկարագրությունը և այն կրթական վերջնարդյունքները, որոնք ենթադրվում է, որ ձեռք կբերի ուսանողը, եթե նա լիարժեք կերպով օգտվի ծրագրի ընձեռած ուսումնառության հնարավորություններից: Ծրագրի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն կարելի է գտնել ԵՊՀ ԻՄ կայքէջում:

**«ԴԵԿՈՐԱՏԻՎ-ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍ» ԾՐԱԳՐԻ ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

<b>Ա. Գիտելիք և իմացություն</b>	
Ա1	Նկարագրելու հայ, համաշխարհային և դեկորատիվ-կիրառական արվեստի զարգացման կարևոր պատմական փուլերը և դրանց օրինաչափությունները, դասակարգելու և համեմատելու տարբեր ժամանակաշրջանների ստեղծագործությունները:
Ա2	Ճանաչելու արվեստի ակնառու գործիչների ստեղծագործությունները և դասակարգելու ըստ արվեստի տեսակների և ժանրերի:
Ա3	Բացատրելու ԴԿԱ (գործվածքի, մետաղի, փայտի գեղարվեստական ձևավորման, մանրանկարի, խեցեգործության, տարազի, տիկնիկագործություն, ապակենկարչություն) առարկաների ստեղծման տեխնոլոգիաները և մեթոդները:
Ա4.	Նկարագրելու թանգարանային աշխատանքը և բացատրելու ցուցահանդեսների կազմակերպման տեխնոլոգիաները:
<b>Բ. Գործնական մասնագիտական կարողություններ</b>	
Բ1	Դեկորատիվ-կիրառական արվեստի առարկաների մակետավորման աշխատանքներում արհեստավարժ կիրառելու քանդակի և պլաստիկ մոդելավորման հնարները:
Բ2	Դեկորատիվ-կիրառական արվեստի առարկաների նախագծման և էսքիզավորման աշխատանքներում ցուցադրելու նկարչության հնարները և բացատրելու դրանց ընտրությունը:
Բ3	Դեկորատիվ-կիրառական արվեստի առարկաների ստեղծման աշխատանքներում մշակելու և կիրառելու ազգային զարդարվեստի մոտիվները, մեկնաբանելու դրանց իմաստային նշանակությունը:
Բ4	Ստեղծելու և վերարտադրելու դեկորատիվ-կիրառական արվեստի առարկաներ՝ ինքնուրույն ընտրելով տեխնիկական և տեխնոլոգիական կատարման եղանակները:
Բ5	Հիմնավորելու սեփական կոնցեպտուալ նախագծերի լուծումները:
Բ6	Պատճենելու ԴԿԱ (մետաղի, փայտի, գործվածքի գեղարվեստական ձևավորման, մանրանկարի, խեցեգործության) առարկաներ:
Բ7	Հիմնավորելով ԴԿԱ ոլորտի արդի և հիմնարար գիտելիքների վրա՝ կազմակերպելու սեփական մասնագիտական գործունեությունը:
<b>Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ</b>	
Գ1	Հայերեն և երկու օտար լեզուներով գրավոր և բանավոր ներկայացնելու մասնագիտական նախագծեր մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը և ցուցաբերելու հաղորդակցման կարողություն՝ հաշվի առնելով դեկորատիվ-կիրառական արվեստում միջմշակութային, սոցիալական ու անձնային փոխազդեցության գործոնները:
Գ2	Աշխատելու թիմում, արդյունավետ շփվելու գործընկերների, ղեկավարության և պատվիրատուների հետ, պատասխանատվություն կրելու սեփական և թիմի աշխատանքի արդյունքների և կայացրած որոշումների համար՝ պահպանելով էթիկայի նորմերը:
Գ3	Պատասխանատու լինելու սեփական կրթության համար, ինքնուրույն որոշելու հետագա մասնագիտական զարգացման խնդիրները և պլանավորելու սեփական առաջընթացը, ինչպես նաև ներկայանալի լինելու հանրությանը՝ մասնագիտական պորտֆոլիոյի միջոցով:
Գ4	Մասնագիտական խնդիրների արդյունավետ լուծման նպատակով իրականացնելու անհրաժեշտ տեղեկատվության որոնում՝ օգտագործելով տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաները:
Գ5	Վարելու մասնագիտական գործնական բանակցություններ՝ ցուցաբերելով դեկորատիվ-կիրառական արվեստի կրթական և արտադրական ոլորտային խնդիրները լուծելու կարողություն:
Գ6	Կողմնորոշվելու արտակարգ իրավիճակներում և անհրաժեշտության դեպքում ցուցաբերելու առաջին բուժօգնություն:

**«ԴԵԿՈՐԱՏԻՎ-ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍ» ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՔԱՐՏԵԶԸ**

Կրթական մոդուլի անվանումը	Դասիչը	Ծրագրի կրթական վերջնարդյունքները																	
		Ա1	Ա2	Ա3	Ա4	Բ1	Բ2	Բ3	Բ4	Բ5	Բ6	Բ7	Գ1	Գ2	Գ3	Գ4	Գ5	Գ6	
<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ (ՊԱՐՏԱԴՐ)</b>																			
Հայոց լեզու և խոսքի մշակույթ-1	0302/B04			x						x		x	x					x	
Հայոց լեզու և խոսքի մշակույթ -2	0302/B10			x						x		x	x					x	
Անգլերեն/ֆրանսերեն/ վրացերեն-1	0305/B14	x								x			x					x	
Անգլերեն/ֆրանսերեն/ վրացերեն-2	0305/B15	x								x			x					x	
Ռուսերեն -1	0305/B02												x					x	x
Ռուսերեն -2	0305/B08												x					x	x
Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակ. բնակ. առաջին բուժօգնություն	0001/B03														x				x
Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ	0105/B07					x	x												
Փյունաբույսերի հիմունքներ	0304/B11			x										x	x				
Հայոց պատմության հիմնահարցեր-1	0304/B01	x												x				x	
Հայոց պատմության հիմնահարցեր-2	0304/B06	x												x				x	
Ֆիզդաստիարակություն	0001/B05																		x
Ֆիզդաստիարակություն	0001/B09																		x
Ֆիզդաստիարակություն	0001/B12																		x
Ֆիզդաստիարակություն	0001/B13																		x
<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ (ԿԱՍՆՆՏՐԱԿԱՆ 4)</b>			Ա1	Ա2	Ա3	Ա4	Բ1	Բ2	Բ3	Բ4	Բ5	Բ6	Բ7	Գ1	Գ2	Գ3	Գ4	Գ5	Գ6
Բարոյագիտության հիմունքներ	0303/B16														x	x			
Բնագիտության ժամանակակից հայեցակարգեր	0105/B16									x									
Գործարարության հիմունքներ	0201/B16									x	x				x				x
Կրթնագիտության հիմունքներ	0304/B16	x							x										
Հոգեբանության հիմունքներ	0303/B16													x	x				
Մշակութաբանության հիմունքներ	0202/B16	x												x					
Սոցիոլոգիայի հիմունքներ	0303/B16														x	x			
Տնտեսագիտության հիմունքներ	0201/B16									x						x	x	x	
Տրամաբանության հիմունքներ	0304/B16									x				x					x
Քաղաքագիտության հիմունքներ	0304/B16														x	x			
Իրավունքի հիմունքներ	0304/B16													x	x	x			





Ավարտական աշխատանք	0404/B47			x		x	x		x	x		x	x		x	x		
<b>ՄԱՄԱԳՔՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ (ԿԱՄԸՆՏՐԱԿԱՆ)</b>		<b>Ա1</b>	<b>Ա2</b>	<b>Ա3</b>	<b>Ա4</b>	<b>Բ1</b>	<b>Բ2</b>	<b>Բ3</b>	<b>Բ4</b>	<b>Բ5</b>	<b>Բ6</b>	<b>Բ7</b>	<b>Գ1</b>	<b>Գ2</b>	<b>Գ3</b>	<b>Գ4</b>	<b>Գ5</b>	<b>Գ6</b>
Այակենկարչություն	0404/B50	x		x			x	x	x				x					
Այլիկացիա	0404/B50			x				x			x	x				x		
ԴԿԱ պատմություն	0404/B50	x	x					x			x	x				x		
Թանգարանային զործ և ցուցահանդեսային տեխնոլոգիաներ	0201/B50	x	x	x	x							x	x	x		x	x	
Տիկնիկագործություն	0404/B50			x				x			x	x				x		
Տարագի պատմություն	0404/B50		x	x				x			x	x				x		

«ԴԵԿՈՐԱՏԻՎ-ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍ» ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԸ

**«ԴԵԿՈՐԱՏԻՎ-ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍ» ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ  
ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐԻՉՆԵՐԸ**

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ/ ՊԱՐՏԱԴԻՐ**

1.0304/B01	2. Հայոց պատմության հիմնահարցեր-1	3.2 ECTS կրեդիտ
4.2 Ժամ/շաբ.	5.15/0/15	
6.1-ին կիսամյակ	7. Ստուգարք	
<p><b>8. Դասընթացի նպատակն է</b> ուսումնասիրել հայ ժողովրդի ծագումից մինչև 17-րդ դարն ընկած ժամանակահատվածի պատմությունը: Այդ նպատակով նախ տրվում է նախագիտելիք Հայկական լեռնաշխարհի պատմական աշխարհագրության, համապատասխան ժամանակաշրջանների պատմության սկզբնաղբյուրների վերաբերյալ, որից հետո ներկայացվում է պատմությունը՝ գիտական բարձր մակարդակով: Դասընթացում ոչ միայն ներկայացվում են փաստերն ու իրադարձությունները, այլև տրվում է դրանց վերլուծությունը, ինչն անհրաժեշտ է պատմությունից դասեր քաղելու և այն հանուն ՀՀ քաղաքական լավագույն ապագայի կերտման նպատակով: Առանձին թեմաներով ուսումնասիրվում են հայ հոգևոր և նյութական մշակույթը, Հայաստանի պետական կառավարման համակարգերը, տնտեսությունը, որոնք ևս ունեն թե՛ ճանաչողական, թե՛ կիրառական նշանակություն:</p> <p><b>Դասընթացի խնդիրները.</b>                  Ձևավորել հստակ պատկերացում հայոց հին և միջնադարյան պետականությունների առանձնահատկությունների, զարգացման ընթացքի և փուլերի մասին:</p> <ul style="list-style-type: none"> <li>✓ Ձևավորել պատմական փաստերը համադրելու, երևույթները համակողմանի գնահատելու կարողություն:</li> <li>✓ Ապահովել գիտելիքներ և հիմք հետագա դասընթացների հետ տրամաբանական կամ պատճառահետևանքային կապ ապահովելու համար:</li> </ul>		
<p><b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b>  <b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. վերարտադրելու հայոց պատմության համապատասխան ժամանակաշրջանների պատմությանը վերաբերող հիմնական փաստական նյութը:</li> <li>2. նկարագրելու հայոց պատմության համապատասխան ժամանակաշրջանների գլխավոր իրադարձությունները:</li> <li>3. ներկայացնելու համապատասխան ժամանակաշրջանում ստեղծված հոգևոր և նյութական մշակույթի արժեքները, լուսաբանելու Հայաստանի պետական կառավարման համակարգերը, տնտեսության, ռազմական և այլ բնագավառներ ու նվաճումները:</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. բացահայտելու պատմական տվյալ ժամանակահատվածի իրադարձությունների պատճառահետևանքային կապերը,</li> <li>2. արժևորելու պատմական տվյալ ժամանակահատվածի կարևոր իրադարձությունները՝ համաշխարհային պատմության համատեքստում,</li> <li>3. արժևորելու ինչպես նախաքրիստոնեական, այնպես էլ քրիստոնեական դարաշրջաններում ստեղծված մեր մշակութային արժեքները:</li> </ol> <p><b>գ. քննհանրական/փոխանցելի կարողություններ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. տարբերակելու և գնահատելու մեր պատմության բնորոշ առանձնահատկությունները, ինչը և հնարավորություն կտա քաղաքական կողմնորոշում ունենալու ներկայում և ապագայում,</li> <li>2. բանավիճելու:</li> </ol>		
<p><b>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնաղբյուրները.</b>  <b>Ա1.</b> Նկարագրելու հայ, համաշխարհային և դեկորատիվ-կիրառական արվեստի զարգացման կարևոր պատմական փուլերը և դրանց օրինաչափությունները, դասակարգելու և համեմատելու տարբեր ժամանակաշրջանների ստեղծագործությունները:  <b>Գ2.</b> Աշխատելու թիմում, արդյունավետ շփվելու գործընկերների, դեկավարության և պատվիրատուների հետ, պատասխանատվություն կրելու սեփական և թիմի աշխատանքի արդյունքների և կայացրած որոշումների համար՝ պահպանելով էթիկայի նորմերը:  <b>Գ4.</b> Մասնագիտական խնդիրների արդյունավետ լուծման նպատակով իրականացնելու անհրաժեշտ տեղեկատվության որոնում՝ օգտագործելով տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաները:</p>		
<p><b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p>		

<ol style="list-style-type: none"> <li>1. դասախոսություն</li> <li>2. ռեֆերատ</li> <li>3. անհատական և խմբային առաջադրանքներ:</li> </ol>
<p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b>  <b>Ստուգաթղթ.</b> Նախապես տրված հարցաշարի շրջանակում անցկացվում է բանավոր հարցում:</p>
<p><b>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b>  <b>Թեմա 1.</b> Հայաստանը հնագույն շրջանում: <b>Թեմա 2.</b> Հայաստանի հին շրջանի պատմությունը. Վանի թագավորությունը /Ք.ա. 9-6-րդ դդ/: Երվանդունիների թագավորությունը: <b>Թեմա 3.</b> Մեծ Հայքի թագավորության վերելքը Արտաշեսյան շրջանում: <b>Թեմա 4.</b> Արշակունիների թագավորությունը: <b>Թեմա 5.</b> Հայաստանը վաղ միջնադարում: <b>Թեմա 6.</b> Հայաստանը զարգացած միջնադարում: <b>Թեմա 7.</b> Հայաստանը ուշ միջնադարում:</p>
<p><b>14. Հիմնական գրականության ցանկ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Հայոց պատմություն, (Հր. Միմոնյանի խմբագրությամբ), Երևան, 2012:</li> <li>2. Հայ ժողովրդի պատմություն, (Ստ. Մելիք-Բախշյանի խմբագրությամբ), Երևան, 1975:</li> <li>3. Հայոց պատմություն. հիմնահարցեր, (Հր. Միմոնյանի խմբագրությամբ), Երևան, 2000:</li> <li>4. Հայոց պատմություն, (Պողոսյան Ս., Ասրյան Ա.), Երևան, 2009:</li> </ol>

<b>1. 0305/B02</b>	<b>2. Ռուսերեն -1</b>	<b>3. 4 ECTS կրեդիտ</b>
<b>4. 4 ժամ/շաբ.</b>	<b>5. 0/60/0</b>	
<b>6. 1-ին կիսամյակ</b>	<b>7. Ստուգաթղթ</b>	
<p><b>8. Դասընթացի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել բանավոր և գրավոր խոսքի և երկխոսության կառուցման ունակություններ, ելնելով հաղորդակցման հիմնական պահանջմունքներից:</b>  <b>Դասընթացի խնդիրները.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Ձևավորել գիտելիքներ՝ հիմնված ժամանակակից պատկերացումների վրա:</li> <li>2. Վեր հանել թերություններն ու շտկել դրանք:</li> <li>3. Խորացնել ուսանողի լեզվական հմտությունները և հաղորդակցման կարողությունները:</li> <li>4. Հատուկ ուշադրություն դարձնել մասնագիտական բառապաշարին՝ ուսումնասիրվող թեմաների շրջանակներում:</li> </ol>		
<p><b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b>  <b>ա. մասնագիտական գիտելիք և խնացություն.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. ներկայացնելու ծրագրով նախատեսված քերականական նյութը,</li> <li>2. ներկայացնելու ծրագրով նախատեսված անհրաժեշտ բառապաշար,</li> <li>3. կիրառելու ուղղագրության հիմնական սկզբունքները և կանոնները:</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. կարդալու, պատմելու, մեկնաբանելու և վերարտադրելու գեղարվեստական և ճանաչողական բնույթի տեքստեր գրքերից, թերթերից, ամսագրերից:</li> </ol> <p><b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. շարադրելու տեքստ (20 նախադասություն) առաջարկված որևէ թեմայով (իր, ընտանիքի, ուսման, ազատ ժամանակի, հայրենիքի, հայրենի քաղաքի, եղանակի, հետաքրքրությունների և այլնի մասին),</li> <li>2. հասկանալու և կարողանալ սկսելու, շարունակելու և ավարտելու երկխոսությունները:</li> </ol>		
<p><b>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնադրյունները.</b></p> <p><b>Գ1.</b> Հայերեն և երկու օտար լեզուներով գրավոր և բանավոր ներկայացնելու մասնագիտական նախագծեր՝ մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը և ցուցաբերելու հաղորդակցման կարողություն՝ հաշվի առնելով դեկորատիվ-կիրառական արվեստում միջմշակութային, սոցիալական ու անձնային փոխազդեցության գործոնները:</p> <p><b>Գ4.</b> Մասնագիտական խնդիրների արդյունավետ լուծման նպատակով իրականացնելու անհրաժեշտ տեղեկատվության որոնում՝ օգտագործելով տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաները:</p> <p><b>Գ5.</b> Վարելու մասնագիտական գործնական բանակցություններ՝ ցուցաբերելով դեկորատիվ-կիրառական արվեստի կրթական և արտադրական ոլորտային խնդիրները լուծելու կարողություն:</p>		
<p><b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնասիրության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Քննարկում /բանավեճ:</li> <li>2. Համագործակցային աշխատանք:</li> <li>3. Էվրիստիկական մեթոդ:</li> <li>4. Մտագրոհ:</li> </ol>		

5. Ինդուկտիվ մեթոդ: 6. Դեդուկտիվ մեթոդ: 7. Վերլուծական մեթոդ: 8. Խոսքային կամ բանավոր մեթոդ: 9. Գրավոր մեթոդ: 10. Բացատրական մեթոդ:
<b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են</b> <b>Ստուգաքնն</b> անց է կացվում բանավոր և հիմնված է կիսամյակի ընթացքում տրված ստուգողական աշխատանքների արդյունքների վրա:
<b>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b> <b>Թեմա 1.</b> Հնչյունաբանություն: Չայնավորների և բաղաձայնների դասակարգումը: Արտասանության և հնչերանգային հիմնական նորմերը: <b>Թեմա 2.</b> Բառագիտություն. բառիմաստ, մենիմաստ և բազմիմաստ բառեր: Բառի ուղիղ և փոխաբերական իմաստները: Հոմանիշներ, հականիշներ, համանուններ, հարանուններ: Դարձվածքներ: <b>Թեմա 3.</b> Բառակազմություն, բառի ձևաբանական կազմը /արմատներ, ածանցներ, վերջավորություններ, նրանց ուղղագրությունը/: <b>Թեմա 4.</b> Ձևաբանություն. ձևաբանության հիմնական միավորները /բառ, ձևույթ/: Խոսքի մասերի դասակարգումը և նրանց քերականական կարգերը: Գոյական անուն, քերականական կարգերը, գոյականի ուղղագրությունը: Ածական անուն, քերականական կարգերը, ուղղագրությունը: Թվական անուն, քերականական կարգերը, ուղղագրությունը: Դերանուն, քերականական կարգերը, ուղղագրությունը: Բայ, քերականական կարգերը, ուղղագրությունը:
<b>14. Հիմնական գրականության ցանկ.</b> 1. Русский язык. Под общ. ред. Л.М.Мкртчяна. Ер., изд-во ЕГУ, 2004. 2. Учебник по русскому языку. Грамматика. Коммуникация Речь., П. Б. Балаян, Л. А. Тер-Саркисян, Б. С. Ходжумян. Ереван, изд-во ЕГУ, 2015г. 3. Учебные пособия по специальности.

1.0001/B03	2. Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն	3. 4 ECTS կրեդիտ
4. 4 ժամ/շաբ.	5. 30/30/0	
6. 1-ին կիսամյակ	7. Մտուցաքնն	
<b>8. Դասընթացի նպատակն է</b> սովորողների մոտ ձևավորել ԱԻ-ների մասին պատկերացում, ԱԻ-ներում գործելու հմտություններ, փրկարարական աշխատանքների կազմակերպման վերաբերյալ հմտություններ և տարաբնույթ պատահարների ժամանակ հնարավոր վնասվածքների և այլ ախտահարումների դեպքում առաջին բուժօգնության ցուցաբերման անհրաժեշտ կարողություններ:		
<b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b> <b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն.</b> 1. ներկայացնելու տարաբնույթ ԱԻ-ների հետևանքով ստեղծված իրավիճակները և դրան դիմակայելու ուղիները, 2. ներկայացնելու տեղեկատվություն ԱԻ-ում և պատերազմի ժամանակ պետության կողմից բնակչության պաշտպանությանն ուղղված միջոցառումների մասին, 3. մեկնաբանելու ՀՀ-ում հավանական ԱԻ-ներից բխող ռիսկերի գնահատման մեթոդները, 4. ներկայացնելու համաճարակային իրավիճակներում վարակի տարածման հնարավոր ուղիներն ու բացատրելու դրանցից պաշտպանության ձևերը, 5. ներկայացնելու առաջին բուժօգնություն ցուցաբերելու հիմնահարցերը:		
<b>բ. գործնական մասնագիտական կարողություններ.</b> 1. գնահատելու տուժածի վիճակը (առաջնային և երկրորդային գնում), վնասվածքի տեսակն ու ծանրությունը և ցույց տալ առաջին բուժօգնություն, 2. դրսևորելու նախընտրելի վարքագիծ տարաբնույթ արտակարգ իրավիճակներում, 3. ցուցաբերելու առաջին բուժօգնություն տարաբնույթ վնասվածքների և ախտահարումների դեպքերում, 4. օգտագործելու ձեռք բերված կարողությունները ԱԻ և պատերազմի ժամանակ պետության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքում:		
<b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ.</b> 1. կիրառելու ձեռք բերված տեսական գիտելիքները գործնականում, 2. աշխատելու թիմում և լուծելու բարդ խնդիրներ,		

3. վերլուծելու իրավիճակը և կատարելու անհրաժեշտ գործողություններ իր և շրջապատի համար:		
<b>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնադրոյունքը.</b> <b>Գ2.</b> Աշխատելու թիմում, արդյունավետ շփվելու գործընկերների, դեկավարության և պատվիրատուների հետ, պատասխանատվություն կրելու սեփական և թիմի աշխատանքի արդյունքների և կայացրած որոշումների համար՝ պահպանելով էթիկայի նորմերը: <b>Գ6.</b> Կողմնորոշվելու արտակարգ իրավիճակներում և անհրաժեշտության դեպքում ցուցաբերելու առաջին բուժօգնություն:		
<b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b> 1. դասախոսություն, 2. սեմինար, 3. հարցադրումներ և քննարկումներ, 4. լաբորատոր աշխատանքներ, 5. տնային, ինքնուրույն և ստուգողական աշխատանքներ և խմբային նախագծեր:		
<b>12. Գնահատման մեթոդները և չափանիշները.</b> <b>Ստուգաքք.</b> Ստուգաքքն անցկացվում է բանավոր հարցման միջոցով: Հարցերի 50%-ին պատասխանելու դեպքում ստուգաքքը համարվում է հանձնված:		
<b>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b> <b>Բաժին 1.</b> Արտակարգ իրավիճակներ ու պատահարներ: <b>Թեմա 1.</b> Արտակարգ իրավիճակների նախարարության կառուցվածքն ու խնդիրները: <b>Թեմա 2.</b> Արտակարգ իրավիճակները, նրանց բնութագրերն ու կանխարգելման միջոցառումները: <b>Բաժին 2.</b> Քաղաքացիական պաշտպանություն: <b>Թեմա 3.</b> Բնակչության գործողությունները ահաբեկությունների և նրանց սպառնալիքի ժամանակ: <b>Թեմա 4.</b> Հակառակորդի հարձակման ժամանակակից միջոցների բնութագրերը, նրանց վարակման օջախները և գնահատման մեթոդները: <b>Թեմա 5.</b> Բնակչության պաշտպանության պաշտպանության կազմակերպումը արտակարգ իրավիճակների և պատերազմի ժամանակ: <b>Թեմա 6.</b> Արտակարգ իրավիճակների և պատերազմի ժամանակ բնակչության բարոյահոգեբանական պատրաստվածության հիմնական ուղղությունները: <b>Թեմա 7.</b> Փրկարարական աշխատանքների կազմակերպումը արտակարգ իրավիճակների և պատերազմի ժամանակ, տեղեկատվության կազմակերպումը: <b>Բաժին 3.</b> ԱՌ-ում բնակչության առաջին բուժօգնություն: <b>Թեմա 8.</b> Առաջին բուժօգնությունն ու մինչբժշկական օգնությունն արտակարգ իրավիճակներում: <b>Թեմա 9.</b> Ախտահարվածների ու հիվանդների բժշկական տեսակավորումը արտակարգ իրավիճակների պայմաններում: <b>Թեմա 10.</b> Սուր հիվանդություններ և թունավորումներ: <b>Թեմա 11.</b> Հակահամաճարակային միջոցառումներն արտակարգ իրավիճակներում: <b>Թեմա 12.</b> Վնասվածքներ և սուր վիրաբուժական հիվանդություններ:		
<b>14. Հիմնական գրականության ցանկ.</b> 1. Ադամյան Մ., «Փոխադրական անշարժացում», ուսումնամեթոդական աշխատանք, Եր., 2011: 2. Մարկարյան Ռ., Ջանջուղազյան Ն., Օհանջանյան Մ., Հարությունյան Ա., Հարությունյան Վ., Բաղդասարյան Լ., Հասարայան Ռ., Վարդանյան Ջ., «Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր», Եր., 2006: 3. Մանասյան Կ., «Միտ-թոքային վերակենդանացման մինչբժշկական մեթոդների ուսուցումը» (ուսումնամեթոդական աշխատանք), Եր., 2007: 4. Մանուկյան Ս., Ճաղարյան Գ., «Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության հիմնահարցեր», ուսումնական ձեռնարկ, Եր., 2017: 5. «Մինչբժշկական օգնությունը բնակչությանը արտակարգ իրավիճակներում», ուսումնական ձեռնարկ, Եր., 2000:		

1. 0302/B04	2. Հայոց լեզու և խոսքի մշակույթ-1	3. 2 ECTS կրեդիտ
4. 2 ժամ/շաբ.	5. 0/30/0	
6. 1-ին կիսամյակ	7. Մտուգաքք	
<b>8. Դասընթացի նպատակն է ուսումնասիրել խոսքը, նրա դրսևորման ձևերը, ուղղախոսական ու արտասանական նորմերը, խոսքի բաղադրիչների կապակցման միջոցները, խոսքի մասերի գործածության յուրահատկությունները, գրագրության ձևերը և խոսքային էթիկան, կառուցել արտահայտիչ ու ներգործուն գրավոր ու բանավոր խոսք:</b> <b>Դասընթացի խնդիրները.</b> 1. ուսուցանել խոսքի մշակույթի ընդհանուր օրինաչափությունները, լեզվական և գրական նորմերը, հնչյունական, բառային և քերականական մակարդակներն ու նրանց կիրառության		

<p>յուրահատկությունները,</p> <p>2. ձևավորել ու մշակել գրական խոսքի բարձր ճաշակ ու մշակույթ:</p>		
<p><b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>ներկայացնելու խոսքի ընդհանուր հատկանիշները, դրսևորման ձևերը, սահմանելու և ճիշտ կիրառելու լեզվական և հնչյունական-արտասանական, ուղղախոսական՝ ճիշտ և տեղին կիրառելով լեզվական տարբեր իրողությունները (բառապաշարի շերտեր, ձևաիմաստային խմբեր, դարձվածքներ և այլն),</li> <li>սահմանելու, բացատրելու գրական, լեզվական, ոճական նորմաները, որոնք կիրառելի են ժամանակակից հայերենում:</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>կառուցելու հարուստ բառապաշարով, շարահյուսորեն ճշգրիտ կապակցված գրավոր և բանավոր խոսք,</li> <li>գործառելու գրագրության ձևերը, ուղղախոսության և արտասանվածքի նորմերը բանավոր խոսքում:</li> </ol> <p><b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը,</li> <li>աշխատելու թիմում:</li> </ol>		
<p><b>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b></p> <p><b>Ա3.</b> Բացատրելու ԴԿԱ (գործվածքի, մետաղի, փայտի գեղարվեստական ձևավորման, մանրանկարի, խեցեգործության, տարազի, տիկնիկագործություն, ապակենկարչություն) առարկաների ստեղծման տեխնոլոգիաները և մեթոդները:</p> <p><b>Բ5.</b> Հիմնավորելու սեփական կոնցեպտուալ նախագծերի լուծումները:</p> <p><b>Բ7.</b> Հիմնելով ԴԿԱ ոլորտի արդի և հիմնարար գիտելիքների վրա՝ կազմակերպելու սեփական մասնագիտական գործունեությունը:</p> <p><b>Գ1.</b> Հայերեն և երկու օտար լեզուներով գրավոր և բանավոր ներկայացնելու մասնագիտական նախագծեր՝ մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը և ցուցաբերելու հաղորդակցման կարողություն՝ հաշվի առնելով դեկորատիվ-կիրառական արվեստում միջմշակութային, սոցիալական ու անձնային փոխազդեցության գործոնները:</p> <p><b>Գ5.</b> Վարելու մասնագիտական գործնական բանակցություններ՝ ցուցաբերելով դեկորատիվ-կիրառական արվեստի կրթական և արտադրական ոլորտային խնդիրները լուծելու կարողություն:</p>		
<p><b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>Քննարկում /բանավեճ:</li> <li>Համագործակցային աշխատանք:</li> <li>Մտազրոհ:</li> <li>Վերլուծական մեթոդ:</li> <li>Խոսքային կամ բանավոր մեթոդ:</li> <li>Գրավոր մեթոդ:</li> <li>Բացատրական մեթոդ:</li> </ol>		
<p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <p><b>Ստուգաբքն</b>՝ անցկացվում է բանավոր հարցման ձևով՝ անցած նյութի հիման վրա:</p>		
<p><b>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.</b></p> <p><b>Թեմա 1.</b> Խոսքի մշակույթ առարկան, նպատակը և խնդիրները: Խոսքի դրսևորման ձևերը: Լեզվական նորմ: <b>Թեմա 2.</b> Հնչյունական /արտասանական/ մակարդակ: Գրագրության ձևեր: <b>Թեմա 3.</b> Բառային մակարդակ: <b>Թեմա 4.</b> Քերականական մակարդակ: Ձևաբանություն: <b>Թեմա 5.</b> Շարահյուսություն:</p>		
<p><b>14. Հիմնական գրականության ցանկ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>Ավետիսյան Յուրի, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Գիրք Ա, ԵՊՀ, Եր., 2014:</li> <li>Հայոց լեզու և խոսքի մշակույթ (Հեղինակային խումբ), Գիրք Բ, ԵՊՀ, Եր., 2015:</li> <li>Ասատրյան Մ. Ե. , Ժամանակակից հայոց լեզու /Ձևաբանություն/, Եր., 2002:</li> <li>Բաղիկյան Խ., Դարձվածային ոճաբանություն, Եր., 2003:</li> <li>Եզեկյան Լ., Հայոց լեզվի ոճաբանություն, Եր., 2003:</li> <li>Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու /Բառագիտություն/, Երևան, 1997:</li> </ol>		

1.0001/B05,B09	2.Ֆիզդաստիարակություն	3.0 ECTS կրեդիտ
4.2 Ժամ/շաբ.	5.0/60/0	

**6.1-ին, 2-րդ կիսամյակներ**

**7.Մտուգարք**

**8. Դասընթացի նպատակն է** հաշվի առնելով հասարակության և անհատի զարգացման հետաքրքրություններն ու շահերը, մարզի բնակլիմայական պայմանները և ուսանողների ֆիզիկական զարգացման ու շարժողական ընդունակությունների առանձնահատկությունները՝ ուսանողների մոտ ձևավորել սոցիալապես անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների ծավալը լիարժեք ֆիզիկական պատրաստություն ստանալու, ամենօրյա կյանքի ու կրթության պահանջները ապահովելու և շարունակելու վերաբերյալ: Կարևորելով ուսանողների գիտակցական մակարդակի բարձրացումը՝ դասընթացը նպատակ ունի.

- ապահովել երիտասարդ սերնդի կրթադաստիարակչական գործընթացը,
- նպաստել ուսումնառողների առողջական վիճակի բարելավմանը,
- բարձրացնել ֆիզիկական դաստիարակության դերն ու նշանակությունը, պարապմունքները դարձնել ակտիվ հանգստի, մտավոր լարվածության վերացման և ուժերի վերականգնման միջոց, կենսաձևում արմատավորել ֆիզիկական կուլտուրան և սպորտը որպես առողջ ապրելակերպի միջոց,
- նպաստել սովորողների մտավոր, հոգևոր և ֆիզիկական ունակությունների համակողմանի ու ներդաշնակ զարգացմանը, բարձրացնել նրանց մտավոր և ֆիզիկական աշխատունակությունը և պատրաստվածությունը,
- զարգացնել ուսանողների ֆունկցիոնալ և շարժողական ընդունակությունները, ձևավորել նրանց մոտ արագաշարժություն, ուժ, ձկունություն, դիմացկունություն, ճարպկություն, կոորդինացիա և այլն:

**Դասընթացի խնդիրներն են.**

- հասնել նրան, որ ուսանողները կարևորեն ֆիզիկական դաստիարակության սոցիալական դերն ու նշանակությունը անձի զարգացման և նրա մասնագիտական գործունեության պատրաստման հարցում,
- ուսանողներին հաղորդել հիմնարար գիտելիքներ առողջ կենսաձևի գիտակենսաբանական և գործնական հիմունքների վերաբերյալ,
- ուսանողների մոտ ձևավորել համամարդկային գաղափարներ, բարոյական և կամային հատկանիշներ, կարգապահություն, աշխատասիրություն, սոցիալական ակտիվ դիրքորոշում,
- ուսանողների մոտ ձևավորել ֆիզիկական ինքնակատարելագործման և ինքնադաստիարակման արժեքային համակարգ, սերմանել ֆիզիկական կուլտուրայով և սպորտով կանոնավոր պարապելու պահանջմունք,

ուսանողների մոտ ձևավորել առողջությունը պահպանելու և ամրապնդելու, հոգեկան կայունությունը զարգացնելու, հոգեֆիզիկական ընդունակություններն ու անձի յուրահատկությունները մշակելու գործնական կարողություններ ու հմտություններ:

**9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***

1. սահմանելու անձնական հիգիենայի և ֆիզիկական վարժություններով պարապմունքների հիգիենիկ կանոնները,
2. թվարկելու կոփման կանոնները և բացատրել դրանց նշանակությունը,
3. ներկայացնելու ֆիզիկական դաստիարակության պարապմունքների ժամանակ անվտանգության պահպանման կանոնները,
4. ներկայացնելու առողջ կենսաձևի գիտակենսաբանական և գործնական հիմունքները,
5. առանձնացնելու վնասակար սովորությունները և բացատրելու դրանց կործանարար ազդեցությունը անձի մտավոր և ֆիզիկական զարգացման վրա:

***բ. գործնական մասնագիտական կարողություններ***

1. կատարելու նորմատիվներին համապատասխան ֆիզիկական վարժություններ (ակրոբատիկ վարժություններ, վազք, հեռացատկ),
2. ցուցաբերելու շարժողական ընդունակություններ ու ֆունկցիոնալ կարողություններ ուսուցանվող մարզաձևերում,
3. ցուցաբերելու տեխնիկական և տակտիկական գործողությունների հստակ կատարում մարզախաղերի ժամանակ:

***գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ***

1. աջակցելու կուրսում, ֆակուլտետում, բուհում և նրա շրջանակներից դուրս անցկացվող մասսայական և առողջարարական ֆիզկուլտուրայի ու սպորտային միջոցառումների

<p>կազմակերպմանը,</p> <ol style="list-style-type: none"> <li>2. դասընթացի ժամանակ կազմակերպելու թիմային մրցախաղեր տարբեր սպորտաձևերից,</li> <li>3. կազմելու իր և ընկերների առողջ կենսակերպի ապահովման ուսումնասիրական պարապմունքների պլան:</li> </ol>
<p><b>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնադրյունը.</b>  <b>Գ6.</b> Կողմնորոշվելու արտակարգ իրավիճակներում և անհրաժեշտության դեպքում ցուցաբերելու առաջին բուժօգնություն:</p>
<p><b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. վերահսկողական ուսումնական պարապմունքներ .       <ul style="list-style-type: none"> <li>▪ տեսական դասեր դասախոսությունների ձևով (խոսքային մեթոդ),</li> <li>▪ մեթոդական-գործնական պարապմունքներ (ինտերակտիվ մեթոդ),</li> <li>▪ ուսումնասիրական պարապմունքներ (ինտերակտիվ մեթոդ),</li> <li>▪ անհատական և խմբակային լրացուցիչ պարապմունքներ (խմբային մեթոդ),</li> <li>▪ ինքնուրույն պարապմունքներ դասախոսի հանձնարարությամբ և հսկողությամբ (խմբային մեթոդ),</li> </ul> </li> <li>2. արտաուսումնական պարապմունքներ.       <ul style="list-style-type: none"> <li>▪ ֆիզիկական վարժությունների կատարում օրվա ընթացքում,</li> <li>▪ վերականգնողական միջոցառումների իրականացում,</li> <li>▪ մասնակցություն պարապմունքներին ըստ նախընտրած մարզաձևերի,</li> <li>▪ ինքնուրույն պարապմունքներ ֆիզիկական վարժություններով, սպորտով, տուրիզմով,</li> <li>▪ մասնակցություն մասսայական առողջարարական և սպորտային միջոցառումներ բուհում,</li> <li>▪ մարզաառողջարարական ճամբարների կազմակերպում:</li> </ul> </li> </ol>
<p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշները.</b>      Դասընթացն ավարտվում է ստուգարքով: Ստուգարքը համարվում է հանձնած, եթե ուսումնառողը ապահովում է ստուգիչ վարժությունների կատարումը և բավարարում է սահմանված նորմատիվների պահանջներին:</p>
<p><b>13. Դասընթացի բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.</b>  <b>1-ին կիսամյակ</b>  <b>Թեմա 1.</b> Ֆիզիկական դաստիարակություն, նրա դերն ու նշանակությունը ընդհանուր կրթական համակարգում: Ֆիզիկուլտուրայի և սպորտի հիգիենիկ հիմունքները: Անձնական հիգիենայի և ֆիզիկական վարժություններով պարապմունքների հիգիենիկ կանոնները: Շարային պատրաստություն, դարձումներ տեղում, շարային քայլք: <b>Թեմա 2.</b> Մարմնի կոփման կանոնները և դրանց նշանակությունը: Վազք: Վազքի տեխնիկայի ուսուցում: Վազք. փոփոխական արագությամբ, արգելքների հաղթահարումով, 60 մ /ցածր մեկնարկից/, 500 մ /աղջիկներ/, 1000 մ /տղաներ/: Հեռացատկ: Հեռացատկի տեխնիկայի ուսուցում: Հեռացատկ տեղից: <b>Թեմա 3.</b> Սպորտային խաղերի դերն ու նշանակությունը ուսանողի մտավոր և ֆիզիկական դաստիարակության, ակտիվ հանգստի, մտավոր լարվածության վերացման և ուժերի վերականգնման գործում: Սպորտային խաղ վոլեյբոլ. խաղի կանոնների ուսուցում, սկզբնահարվածի ուսուցում, գնդակի ընդունում և փոխանցում 2 ձևերով: Սպորտային խաղ բասկետբոլ, խաղի կանոնների ուսուցում: Գնդակի վարում և փոխանցում 2 ձևերով: Զամբյուղի մեջ գնդակի նետման տեխնիկայի ուսուցում: <b>Թեմա 4.</b> Ուսանողի առողջ կենցաղավարության հիմունքները, նրա արդյունավետության չափանիշները, պայքարը բացասական երևույթների դեմ: Երկկողմանի խաղ (վոլեյբոլ, բասկետբոլ):  <b>2-րդ կիսամյակ</b>  <b>Թեմա 1.</b> Ընդհանուր ֆիզիկական և սպորտային պատրաստության դերը ֆիզիկական դաստիարակության գործում: Շարժողական ընդունակությունների կատարելագործման հիմունքները: Մարմնամարզություն: Ակրոբատիկ վարժություններ. գլուխկոնծի առաջ, ետ, «կամուրջ» պատկած դրությունից, կանգ թիակների վրա, կանգ գլխի վրա, գլորումներ, գլուխկոնծի երկարությամբ: <b>Թեմա 2.</b> Ֆիզիկական բեռնվածության ծավալը ուսանողական տարիքում, նրա միջոցով ֆիզիկական զարգացման և մարմնակազմության հնարավորություններն ու շտկման պայմանները: Մարմնամարզություն: Մարզանստարանի վրա հենում պատկած դրությունից ձեռքերի ծալում և ուղղում: <b>Թեմա 3.</b> Ինքնուրույն պարապմունքների մեթոդական հիմունքները, նրանց ձևերը և տարիքային և սեռային առանձնահատկությունները: Սպորտային խաղ վոլեյբոլ. վերնից սկզբնահարվածի տեխնիկայի ուսուցում: Սպորտային խաղեր փետրագնդակ, սեղանի թենիս. տեխնիկական և տակտիկական տարրերի ուսուցում: Սպորտային խաղ բասկետբոլ. գնդակին տիրապետման տեխնիկայի ուսուցում, պաշտպանության տեխնիկայի ուսուցում, գնդակի նետում զամբյուղի մեջ: <b>Թեմա 4.</b> Սպորտային խաղ վոլեյբոլ: Հարձակողական հարվածի տիրապետման տեխնիկայի ուսուցում: Խաղի պաշտպանության տեխնիկայի ուսուցում: Երկկողմանի խաղ: <b>Թեմա 5.</b></p>



Ինքնուրույն պարապմունքների հիգիենան և ինքնահսկումը: Վազք. ընթացքից, արագացումներով, ցածր մեկնարկից, փոփոխական վազք: Կարճ վազքի տեխնիկայի առանձնահատկությունները` 100 մ, 200 մ, 300 մ: Վազք արգելքների հաղթահարումով (աղջիկներ` 200-300 մ, տղաներ` 500 մ): Երկար վազքի տեխնիկայի առանձնահատկությունները: Վազք 500 մ (աղջիկներ), 1000 մ (տղաներ): Հեռացատկ: Հեռացատկ տեղից` գույգ ոտքերի հրումով: **Թեմա 6.** Մասնակցությունը սպորտային մրցումների, դրանց ֆիզիկական և հոգևոր դաստիարակչական նշանակությունը: **Թեմա 8.** Ստուգարքային ձևերի նախապատրաստում:

**Հիմնական գրականության ցանկ.**

1. Սամվելյան Լ. Ա., Պետրոսյան Գ. Ա., Թումանյան Հ. Գ., Գրիգորյան Ա. Ա., Ֆիզիկական դաստիարակության ծրագիր (Բարձրագույն ուսումնական հաստատությունների համար), Երևան, ՎՄՎ-ՊՐԻՆՏ, 2007թ.:
2. Ազիզյան Գ. Ն., Վանեայան Հ. Մ., Ֆիզիկական պատրաստություն, Եր., 2002:
3. Ավագյան Է. Հ., Ֆիզիկական պատրաստություն, Ուսումնական ձեռնարկ, Եր., 1978:
4. Բաբայան Հ. Ս., Ուսանողների գեղագիտական դաստիարակություն ֆիզդաստիարակության գործընթացում, Եր., 2000:
5. Բաբայան Մ. Ա., Մարմնամարզության հիմունքներ, Եր., 1989:
6. Բոյախյան Գ. Ե., Մարմնամարզության կիրառական վարժություններ ուսանողների համար, Եր., 2005:
7. Թումանյան Հ. Գ., Դիմացկունություն, տարիքային փոփոխությունները և նրա մշակման մեթոդիկան, Եր., 2002:
8. Մելիքսեյան Ռ. Տ., Տեսական գիտելիքների ուսուցումը ֆիզիկական կուլտուրայի դասերին, Եր., 1991:
9. Մելքոնյան Հ., Կալաջյան Ե., Մարզախաղեր: Խաղերի կանոնները, Եր., 2007:
10. Նահապետյան Ս. Ս., Ընդհանուր զարգացնող վարժություններ, Եր., 1988:

1. 0304/B06	2. Հայոց պատմության հիմնահարցեր-2	3. 2 ECTS կրեդիտ
4. 2 ժամ/շաբ.	5. 15/0/15	
6. 2-րդ կիսամյակ	7. Ստուգարք	
<p>8. <b>Դասընթացի նպատակն է</b> ուսումնասիրել հայ ժողովրդի 17-րդ դարից մինչև մեր օրերը ընկած ժամանակահատվածի պատմությունը: Այդ նպատակով նախ տրվում է նախագիտելիք համապատասխան ժամանակաշրջանների պատմության սկզբնաղբյուրների վերաբերյալ, որից հետո ներկայացվում է պատմությունը` գիտության ամենավերջին ձեռքբերումների մակարդակով: Դասընթացում ոչ միայն ներկայացվում են փաստերն ու իրադարձությունները, այլև տրվում է դրանց վերլուծությունը, ինչն անհրաժեշտ է պատմությունից դասեր քաղելու և այն հանուն մեր ապագայի կառուցման գործածելու նպատակով: Առանձին թեմաներով ուսումնասիրվում են հայ հոգևոր և նյութական մշակույթը, Հայաստանի պետական կառավարման համակարգերը, տնտեսությունը, որոնք ևս ունեն թե՛ ճանաչողական, թե՛ կիրառական նշանակություն: Հայոց պատմությունը դիտարկվում է համաշխարհային պատմության համատեքստում:</p> <p>Դասընթացի խնդիրները.</p> <ul style="list-style-type: none"> <li>✓ Ձևավորել հստակ պատկերացում հայոց նոր և նորագույն պատմության առանձնահատկությունների, զարգացման ընթացքի և փուլերի մասին:</li> <li>✓ Ձևավորել պատմական փաստերը համադրելու, երևույթները համակողմանի գնահատելու կարողություն:</li> <li>✓ Ապահովել գիտելիքներ և հիմք հետագա դասընթացների ուսումնասիրման, քննարկման և ներկայացման համար:</li> </ul>		

<p><b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b>  <b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>վերարտադրելու հայոց պատմության համապատասխան ժամանակաշրջանների պատմությանը վերաբերող հիմնական փաստական նյութը,</li> <li>նկարագրելու հայոց պատմության համապատասխան ժամանակաշրջանների գլխավոր իրադարձությունները:</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>բացահայտելու պատմական տվյալ ժամանակահատվածի իրադարձությունների պատճառահետևանքային կապերը,</li> <li>արժևորելու պատմական տվյալ ժամանակահատվածի կարևոր իրադարձությունները՝ համաշխարհային պատմության համատեքստում</li> </ol> <p><b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>տարբերակելու և գնահատելու մեր պատմության որոշակի օրինաչափությունները, ինչը ևս հնարավորություն կտա ապագայում ճիշտ կողմնորոշվելու:</li> </ol>		
<p><b>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b></p> <p><b>Ա1.</b> Նկարագրելու հայ, համաշխարհային և դեկորատիվ-կիրառական արվեստի զարգացման կարևոր պատմական փուլերը և դրանց օրինաչափությունները, դասակարգելու և համեմատելու տարբեր ժամանակաշրջանների ստեղծագործությունները:</p> <p><b>Գ2.</b> Աշխատելու թիմում, արդյունավետ շփվելու գործընկերների, դեկավարության և պատվիրատուների հետ, պատասխանատվություն կրելու սեփական և թիմի աշխատանքի արդյունքների և կայացրած որոշումների համար՝ պահպանելով էթիկայի նորմերը:</p> <p><b>Գ4.</b> Մասնագիտական խնդիրների արդյունավետ լուծման նպատակով իրականացնելու անհրաժեշտ տեղեկատվության որոնում՝ օգտագործելով տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաները:</p>		
<p><b>11. Վիրավորում են դասավանդման և ուսումնասրության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>դասախոսություն,</li> <li>ռեֆերատ,</li> <li>անհատական և խմբային առաջադրանքներ:</li> </ol>		
<p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b>  Ստուգաքք. Նախապես տրված հարցաշարի շրջակայում անցկացվում է բանավոր հարցում:</p>		
<p><b>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b></p> <p><b>Թեմա 1.</b> Հայ ազատագրական շարժումները 16-18-րդ դարերում: <b>Թեմա 2.</b> Ռուսաստանի ներթափանցումը Անդրկովկաս 19-րդ դարի սկզբին: <b>Թեմա 3.</b> Հայկական հարցի միջազգայնացումը: <b>Թեմա 4.</b> Ազատագրական խմբակների, կազմակերպությունների ու քաղաքական-ազգային կուսակցությունների ձևավորումը: <b>Թեմա 5.</b> Ազգային-ազատագրական զինված պայքարի փուլը: <b>Թեմա 6.</b> Իրավիճակը Հայաստանը 20-րդ դարի սկզբին: Արևմտահայության Մեծ Եղեռնը և ինքնապաշտպանական մարտերը: <b>Թեմա 7.</b> Հայաստանը 1917թ. ռուսական հեղափոխությունների շրջանում: <b>Թեմա 8.</b> Հայաստանի Հանրապետությունը 1918-1920թթ.: <b>Թեմա 9.</b> Խորհրդային Հայաստանը 1920-1991թթ.: <b>Թեմա 10.</b> Հայաստանի Երրորդ Հանրապետությունը: <b>Թեմա 11.</b> Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:</p>		
<p><b>14. Հիմնական գրականության ցանկ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>Հայոց պատմություն, (Հր. Միմոնյանի խմբագրությամբ), Երևան, 2012:</li> <li>Հայ ժողովրդի պատմություն, (Մտ. Մելիք-Բախշյանի խմբագրությամբ), Երևան, 1975:</li> <li>Հայոց պատմություն. հիմնահարցեր, (Հր. Միմոնյանի խմբագրությամբ), Երևան, 2000:</li> <li>Հայոց պատմություն, (Պողոսյան Ս., Ասրյան Ա.), Երևան, 2009:</li> </ol>		

1. 0105/B07	2. Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ	3. 2 ECTS կրեդիտ
4.2 ժամ/շաբ.	5.30/0/0	
6.1-ին կիսամյակ	7. Ստուգաքք	
<p><b>8. Դասընթացի նպատակն է՝</b> ուսումնասիրել կենսոլորտի կառուցվածքի տեսական հիմնահարցերը և «մարդ-կենսոլորտ» համակարգում նրանց փոխազդեցությունը, ինչպես նաև պատրաստել որակյալ մասնագետներ, որոնք կարող են գնահատել շրջակա միջավայրի աղտոտման աստիճանը, որպես հասարակության գործունեության արդյունք և նախազգուշացնելու կամ կանխարգելելու անթրոպոգեն գործունեության ոչ ցանկալի հետևանքները: Նպաստել հասկանալու էկոլոգիական հիմնախնդիրների էությունը և զարգացնել այդ խնդիրները լուծելու ունակությունը:</p> <p><b>Դասընթացի խնդիրները.</b></p>		

<p><b>12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <p>Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին տրվում է 4 հարց դասընթացի բովանդակությունից, որոնց բավարար պատասխանի դեպքում ստուգարքը համարվում է հանձնված:</p>
<p><b>13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.</b></p> <p><b>Թեմա 1.</b> Քաղաքագիտության ձևավորման նախապատմությունը: <b>Թեմա 2.</b> Քաղաքական մտքի զարգացման հիմնական էտապները: <b>Թեմա 3.</b> Քաղաքական իշխանություն և իշխանական հարաբերություններ: <b>Թեմա 4.</b> Քաղաքական ընտրանի /Էլիտա/: <b>Թեմա 5.</b> Քաղաքական լիդերություն: <b>Թեմա 6.</b> Քաղաքական ռեժիմներ: <b>Թեմա 7.</b>Հասարակության քաղաքական համակարգը: Պետությունը որպես քաղաքական համակարգի գլխավոր ինստիտուտ: Պետության ծագումը, բնույթը, դերը և հիմնական ֆունկցիաները: <b>Թեմա 8.</b> Քաղաքական կուսակցություններ և կուսակցական համակարգեր: <b>Թեմա 9.</b> Քաղաքացիական հասարակություն: <b>Թեմա 10.</b> Քաղաքական սոցիալականացում և քաղաքական մասնակցություն: <b>Թեմա 11.</b> Ընտրություններ և ընտրական համակարգեր: <b>Թեմա 12.</b> Գաղափարախոսությունների տեսություն: <b>Թեմա 13.</b> Ազգեր և ազգային քաղաքականություն: <b>Թեմա 14.</b> Քաղաքականությունը և կրոնը: <b>Թեմա 15.</b> Քաղաքական մշակույթ:</p>
<p><b>14.Հիմնական գրականության ցանկ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>Քաղաքագիտություն, ԵՊՀ հրատ., Եր., 2006:</li> <li>Буренко В., Журавлев В., Политология, Москва, 2004.</li> <li>Гаджиев К., Политология. Москва, 2005.</li> <li>Политология. Под ред. А.А. Радугина. Изд-во Центр, Москва, 1999.</li> <li>Пушкарева Г.В. Политология. Изд-во Айрис-пресс, Москва, 2002.</li> <li>Мальцев В.А. Основы политологии. Изд-во ИТРССПИ, Москва, 1998.</li> </ol>

1. 0304/B16	2. Իրավունքի հիմունքներ	3. 2 ECTS կրեդիտ
4. 2 ժամ/շաբ.	5. 30/0/0	
6. 4-րդ կիսամյակ	7. Ստուգարք	
<p><b>8. Դասընթացի նպատակն է ուսանողին սովորեցնել հասարակական կյանքի տարբեր ոլորտների օրենսդրական կարգավորման հիմունքները, ստացած իրավական գիտելիքները գործնականում կիրառելու հմտություններ, ինչպես նաև ձևավորել իրավական աշխարհայացք ու մշակույթ:</b></p> <p><b>Դասընթացի խնդիրները.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>ձևավորել կայուն գիտելիքներ իրավունքի տեսության և իրավունքի առանձին ճյուղերի վերաբերյալ,</li> <li>ձևավորել մասնագիտական գործունեության մեջ նորմատիվ իրավական ակտերի, իրավաբանական փաստաթղթերի կիրառման կարողություններ ու ունակություններ,</li> </ol>		

<p><b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b>  <b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. սահմանելու իրավագիտության հիմնական հասկացությունները, կատեգորիաները, ինստիտուտները և տերմինները,</li> <li>2. ներկայացնելու հայկական իրավունքի և օրենսդրության համակարգի կառուցվածքը, իրավական նորմերի առանձնահատկությունները և նրանց տեսակները, նորմատիվ իրավական ակտերի համակարգը,</li> <li>3. մեկնաբանելու իր մասնագիտական ոլորտում իրավաբանական տերմինաբանությունը:</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. կիրառելու իրավական ակտերը, իրավաբանական փաստաթղթերը իր մասնագիտական գործունեության մեջ,</li> <li>2. վերլուծելու իրավական նորմը՝ այն կիրառելով կոնկրետ իրավիճակներում,</li> <li>3. վերլուծելու և համակարգելու իրավական տեղեկատվությունը:</li> </ol> <p><b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</li> </ol>		
<p><b>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b></p> <p><b>Գ1.</b> Հայերեն և երկու օտար լեզուներով գրավոր և բանավոր ներկայացնելու մասնագիտական նախագծեր, մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը և ցուցաբերելու հաղորդակցման կարողություն՝ հաշվի առնելով դեկորատիվ-կիրառական արվեստում միջմշակութային, սոցիալական ու անձնային փոխազդեցության գործոնները:</p> <p><b>Գ2.</b> Աշխատելու թիմում, արդյունավետ շփվելու գործընկերների, ղեկավարության և պատվիրատուների հետ, պատասխանատվություն կրելու սեփական և թիմի աշխատանքի արդյունքների և կայացրած որոշումների համար՝ պահպանելով էթիկայի նորմերը:</p> <p><b>Գ3.</b> Պատասխանատու լինելու սեփական կրթության համար, ինքնուրույն որոշելու հետագա մասնագիտական զարգացման խնդիրները և պլանավորելու սեփական առաջընթացը, ինչպես նաև ներկայանալի լինելու հանրությանը՝ մասնագիտական պորտֆոլիոյի միջոցով:</p>		
<p><b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. դասախոսություն</li> <li>2. ռեֆերատ</li> <li>3. զեկուցում:</li> </ol>		
<p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b>          Ստուգարքը անց է կացվում բանավոր:</p>		
<p><b>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.</b></p> <p><b>Թեմա 1.</b> Պետության և իրավունքի տեսություն: <b>Թեմա 2.</b> Սահմանադրական իրավունք: <b>Թեմա 3.</b> Քաղաքացիական իրավունք: <b>Թեմա 4.</b> Քրեական իրավունք: <b>Թեմա 5.</b> Աշխատանքային իրավունք: <b>Թեմա 6.</b> Ընտանեկան իրավունք: <b>Թեմա 7.</b> Տեղական ինքնակառավարում: <b>Թեմա 8.</b> Վարչական իրավունք: <b>Թեմա 9.</b> Դատավարական իրավունք: <b>Թեմա 10.</b> Արդարադատություն, դատախազություն և նոտարիատ: <b>Թեմա 11.</b> Կրթության, գիտության, մշակույթի և սոցիալական ոլորտի ՀՀ օրենսդրություն: <b>Թեմա 12.</b> Միջազգային իրավունք:</p>		
<p><b>14. Հիմնական գրականության ցանկ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>5. Այվազյան Վ., Մարդու իրավունքներ, Եր., 2002:</li> <li>6. Առաքելյան Ս., Գաբուզյան Ա., ՀՀ քրեական իրավունք, Եր., 2003, 2006:</li> <li>7. Բարսեղյան Ս., ՀՀ Քաղաքացիական իրավունք, Եր., 2000:</li> <li>8. Դիրխանյան Ա., ՀՀ դատարանակազմությունը և իրավապահ մարմինները, Եր., 1999:</li> <li>9. Դարախանյան Գ., Ընտանեկան իրավունք, Եր, 2001:</li> <li>10. Քոչարյան Վ., Միջազգային իրավունք, Եր., 2002:</li> </ol>		

1.0104/B 16	2. Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հիմունքներ	3. 2 ECTS կրեդիտ
4. 2 ժամ/շաբ.	5. 0/30/0	
6. 4-րդ կիսամյակ	7. Ստուգարք	
<p><b>8. Դասընթացի նպատակն է</b> ուսանողի մոտ ձևավորել անհրաժեշտ գիտելիքներ համակարգիչների տեխնիկական և ծրագրային ապահովման մասին, զարգացնել համակարգչից օգտվելու հմտություններ, որոնք կկիրառվեն ուսումնառության ընթացքում, առօրյայում, շարունակական կրթության ընթացքում, ստեղծել անհրաժեշտ հիմքեր համակարգչի օգնությամբ մասնագիտության մեջ գործնական</p>		

հետազոտություններ ու վերլուծություններ կատարելու համար:

**Դասընթացի խնդիրները**

1. ուսանողներին ծանոթացնել համակարգչի կառուցվածքին, համակարգային և կիրառական ծրագրերին,
2. մեկնաբանել փաստաթղթերի գեղարվեստական ձևավորման ոճերը, շրիֆտատեսակները, խմբագրման հնարավորությունները,
3. բացահայտել ժամանակակից համակարգչի դերն ու կարևորությունը հումանիտար մասնագիտությունների մեջ,
4. կատարել տրամաբանական արտահայտություններ Excel համակարգով խնդիրներ լուծելու համար,
5. ըստ կատարած հաշվարկների ստացված տվյալների կառուցել գրաֆիկներ, տեսակավորել:

**9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

**ա. մասնագիտական գիտելիք և իմացություն**

1. թվարկելու համակարգչի կառուցվածքը և նշելու աշխատանքի հիմնական սկզբունքները,
2. ընտրելու ոճեր, շրիֆտատեսակներ, շաբլոններ word տեքստային խմբագրով փաստաթղթեր ձևավորելու համար,
3. վերարտադրելու և ստեղծելու էլեկտրոնային աղյուսակ,
4. ուսանողը ունակ կլինի ընտրել և ներկայացնել Power Point համակարգի հնարավորությունները,

**բ. գործնական մասնագիտական կարողություններ**

1. օգտագործելու օպերացիոն համակարգի հնարավորությունները,
2. կատարելու իր թղթավարությունը Microsoft Word տեքստային խմբագրիչով,
3. էլեկտրոնային աղյուսակով կատարելու հաշվարկային աշխատանքներ՝ կիրառելով ստանդարտ ֆունկցիաներ և տրամաբանական գործողություններ,
4. կիրառելու Power Point ծրագիրը գեկուցումների, ռեֆերատների, կուրսային և ավարտական աշխատանքների ցուցադրման համար:

**գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ**

5. պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

**10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

**Գ2.** Աշխատելու թիմում, արդյունավետ շփվելու գործընկերների, ղեկավարության և պատվիրատուների հետ, պատասխանատվություն կրելու սեփական և թիմի աշխատանքի արդյունքների և կայացրած որոշումների համար՝ պահպանելով էթիկայի նորմերը:

**Գ4.** Մասնագիտական խնդիրների արդյունավետ լուծման նպատակով իրականացնելու անհրաժեշտ տեղեկատվության որոնում՝ օգտագործելով տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաները:

**Գ5.** Վարելու մասնագիտական գործնական բանակցություններ՝ ցուցաբերելով ղեկորատիվ-կիրառական արվեստի կրթական և արտադրական ոլորտային խնդիրները լուծելու կարողություն:

**11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. գործնական աշխատանք

**12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

**Ստուգաք.**

Թեստը, առաջադրանքը, խնդիրը կամ ռեֆերատը. գնահատվում է «Բավարար», եթե կատարել է 50% և ավելի:

1. Ուսանողը շնորհանդեսի ուղեկցությամբ Power Point ծրագրով ներկայացնում է հանձնարարված ինքնուրույն աշխատանքները
2. Ուսանողը հանձնում է ուսումնառության ողջ ընթացքում ստացած գիտելիքների վերաբերյալ ռեֆերատը
3. Ուսանողը տեղում կատարում է առաջադրանք, որը բաղկացած է MS Word և Excel – ծրագրերի թեստերից:

**13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.**

**Թեմա 1. Համակարգչի կառուցվածքը և աշխատանքի հիմնական սկզբունքները.**

Համակարգչի կառուցվածքը և աշխատանքի հիմնական սկզբունքները: ԷՀՄ-ի հիմնական հանգույցները. հիշատարք, պրոցեսոր, ներածման և արտածման սարքեր: ԷՀՄ-ի ծրագրային ապահովումը: Ֆայլ, ֆայլի անվանում. ֆայլի ճանապարհ: Հիշողության չափման միավորները:

**Թեմա 2. Microsoft Word փաստաթղթերի ստեղծում և ձևավորում.**

Փաստաթղթերի ստեղծում և ձևավորում: Տառի բնութագրերը: WordArt-ի տեղադրում: Նրա հետ աշխատելու գործիքներ: Formatting պանելի գործիքները: Աշխատանք Tab-երի հետ: Պարագրաֆ, նրա բնութագրերը: Էջի պարամետրերի տեղադրում: Եզրագծերի և ֆոնի տեղադրում, տեքստերի խմբագրում

<p>(բլոկների պատճենում, տեղափոխում, տեղադրում): Փաստաթղթերի նախնական դիտարկում և տպում: Տեքստերի սխալների ուղղում, որոնում, փոխարինում: Էջի համարների տեղադրում: Drawing ռեժիմ: Աշխատանք Autoshapestերի հետ: Աղյուսակների տեղադրում:</p> <p><b>Թեմա 3. Microsoft Excel էլեկտրոնային աղյուսակներ</b></p> <p>Microsoft Excel էլեկտրոնային աղյուսակային համակարգի պատուհանի կառուցվածքը: Բջիջներ: Տվյալների ներմուծում, խմբագրում, ֆորմատավորում: Բջջի հասցեների տիպերը: Ներմուծման ավտոմատացում: Տրամաբանական գործողություններ, ֆունկցիաներ: Տվյալների տեսակավորում՝ Filter, Sort ռեժիմները:</p> <p><b>Թեմա 4. Microsoft PowerPoint ներկայացման ստեղծում:</b></p> <p>Ներկայացումների ստեղծում: Անիմացիաների և ոճերի հաղորդում սահիկներին: Չայնային, լուսային ոճերի հաղորդում սահիկներին: Դիզայնի ձևավորում: Ավտոմատացնել սահիկների միջև անցումը: Ներկայացումն ինտեգրել այլ թվայնացված միջոցների հետ:</p> <p><b>Հիմնական գրականության ցանկ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Հովակիմյան Ա., Սարգսյան Ս., Խաչոյան Լ., Իսախրյան Ն., Մանուկյան Ա., Մկրտչյան Ն.. Համակարգչային գրագիտություն, Մեթոդական ձեռնարկ, Եր., 2012:</li> <li>2. Тихомиров А., Прокди А.К. Колосков П.В., Клендрова И.А. и др. Microsoft Office 2007, Наука и Техника, Эл. Книга, 2008.</li> <li>3. Ջանփոլադյան Բ., Քոմիլյութերային կիրառական տեխնոլոգիաների հիմունքները, ՀՊՃՀ, Եր. 2000:</li> </ol>
---

**ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅԱՄԱՍ ՊԱՐՏԱԴԻՐ ԴԱՍԸՆԹԱՅՆԵՐ**

<b>1. 0403/B17</b>	<b>2. Գծագրություն</b>	<b>3. 4 ECTS կրեդիտ</b>
<b>4. 4 ժամ /շաբ.</b>	<b>5. 10/50/0</b>	
<b>6. 1-ին կիսամյակ</b>	<b>7. Առանց ընթացիկ քննությունների գնահատման</b>	
<p><b>8. Դասընթացի նպատակն է ուսանողին սովորեցնել գծագրության հնարավոր բոլոր եղանակների լուծման ձևերին, ձևավորել տարածական և մտավոր մտածելակերպ:</b></p> <p><b>Դասընթացի խնդիրները.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. ուսանողին սովորեցնել գծագրերի կառուցման ճիշտ ձևերը,</li> <li>2. ճշգրիտ չափումների, կետերի, ուղիղների և հարթությունների միջոցով ստանալ հարթապատկերների և ծավալների փոխհարաբերությունները:</li> </ol>		
<p><b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. տարածություն մեջ պատկերացնելու հարթ մարմինների պրոյեկտումը,</li> <li>2. կառուցելու պարզ դետալների իզոմետրիկ և դիմետրիկ տեսքը,</li> <li>3. գծագրական խնդիրներ լուծելու և գծագրելու:</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. կատարելու շրջանագծերի խառը, ներքին և արտաքին սահուն միացումներ՝ լծորդումներ,</li> <li>2. հարթությունների վրա կառուցելու կետերի և ուղիղների պրոյեկտում,</li> <li>3. պրոյեկտող հարթությունների մեջ պատկերելու առարկաների պրոյեկցիաները,</li> <li>4. կատարելու յուրաքանչյուր երկրաչափական մարմնի մակերեսին պատկանող կետերի կառուցում,</li> <li>5. գծելու երկրաչափական մարմինների փովածքները և կառուցելու մանրակերտը,</li> <li>6. գծելու երկրաչափական առարկաների կտրվածքների ճշգրիտ պատկերները՝ իրենց համաչափություններով,</li> <li>7. պատկերացնելու երկրաչափական մարմինների տարածական ծավալը, պարզ կտրվածքները և ճիշտ գծագրելու դրանք:</li> </ol> <p><b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. ճանաչելու գծագրական գործիքները և տիրապետելու նրանցով աշխատելու հմտություններին:</li> </ol>		
<p><b>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b></p> <p><b>Ա3.</b> Բացատրելու ԴԿԱ (գործվածքի, մետաղի, փայտի գեղարվեստական ձևավորման, մանրանկարի, խեցեգործության, տարազի, տիկնիկագործություն, ապակենկարչություն) առարկաների ստեղծման տեխնոլոգիաները և մեթոդները:</p> <p><b>Բ3.</b> Դեկորատիվ-կիրառական արվեստի առարկաների ստեղծման աշխատանքներում մշակելու և կիրառելու ազգային զարդարվեստի մոտիվները, մեկնաբանելու դրանց իմաստային նշանակությունը:</p>		



<p><b>F5.</b> Հիմնավորելու սեփական կոնցեպտուալ նախագծերի լուծումները:</p> <p><b>F6.</b> Պատճենելու ԴԿԱ (մետաղի, փայտի, գործվածքի գեղարվեստական ձևավորման, մանրանկարի, խեցեգործության) առարկաներ:</p>
<p><b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b>  1. խոսքային մեթոդները, 2. գննական մեթոդները, 3. գործնական մեթոդները, 4. հետաքրքրությունների խթանման մեթոդները, 5. ինտերակտիվ-կառուցողական մեթոդները, 6. համագործակցային ուսուցման մեթոդները, 7. քննադատական մտածողության մեթոդները, 8. խմբային աշխատանքի մեթոդները, 9. ինքնուրույն աշխատանքի մեթոդները, 10. վերահսկողության մեթոդները:</p>
<p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b>  <b>Գնահատվում է առանց ընթացիկ քննությունների գնահատման`</b> առավելագույն 20 միավոր` եզրափակիչ քննությամբ՝ 0- 9 միավոր, ընթացիկ ստուգումներով՝ 0-8 միավոր և մասնակցության համար՝ 0- 3 միավոր:</p>
<p><b>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b>  <b>Թեմա 1.</b> Ներածություն: <b>Թեմա 2.</b> Լծորդումներ, շրջանագծի շոշափողներ և կանթաձև կորագծեր: <b>Թեմա 3.</b> Ընդհանուր տեղեկություն պրոյեկցիաների մասին: <b>Թեմա 4.</b> Հարթ մարմինների պրոյեկտումը հարթությունների վրա: <b>Թեմա 5.</b> Աքսիոնոմետրիկ պրոյեկցիաներ: <b>Թեմա 6.</b> Ուղղանկյուն իզոմետրիկ պրոյեկցիաներ: <b>Թեմա 7.</b> Երկրաչափական մարմինների պրոյեկտումը հարթությունների վրա: <b>Թեմա 8.</b> Երկրաչափական մարմինների մակերեսին պատկանող կետերի կառուցում (պրիզմա, քառանկյուն բուրգ, գլան, կոն, գունդ): <b>Թեմա 9.</b> Երկրաչափական մարմինների փովածքների կառուցում (գլան, կոն, բուրգ, պրիզմա): <b>Թեմա 10.</b> Երկրաչափական մարմինների պարզ կտրվածքներ: <b>Թեմա 11.</b> Գլանը և պրիզման կտրել պրոյեկտող հարթություններով: <b>Թեմա 12.</b> Կոնը և բուրգը կտրել պրոյեկտող հարթություններով: <b>Թեմա 13.</b> Գունդը կտրել պրոյեկտող հարթություններով:</p>
<p><b>14. Հիմնական գրականության ցանկ.</b>  1. Գորդոն Վ. Օ., Գծագրական երկրաչափության դասագիրք և խնդրագիրք, Ե. , 1960:  2. А. Ф. Крилов, Черчение рисование / изд. Высшая школа. 1980.  3. Ю. Н. Короев, Ю. В. Котов, Архитектура, / изд. Архитектура-С, 2014.  4. Курс черчения /С. В. Розов/, изд. Архитектвтура- С 2014.</p>

<b>1. 0403/B37</b>	<b>2. Ակարչություն -1</b>	<b>3. 11 ECTS կրեդիտ</b>
<b>4. 11 ժամ/շաբ.</b>	<b>5.14/136/0</b>	
<b>6. 1-ին կիսամյակ</b>	<b>7. Առանց եզրափակիչ գնահատման</b>	
<p><b>8. Դասընթացի նպատակն է</b>  1. Ուսանողին ծանոթացնել գծանկարի հնարավորություններին, ձևավորել տարածական մտածելակերպ: Ուսումնասիրել և գծանկարի օրենքներին համապատասխան վերարտադրել առաջադրվող երկրաչափական մարմինները, կենցաղային իրերն ու առարկաները:  2. Ուսանողներին սովորեցնել ջրաներկով պատկերել նատյուրմորտ` տարբեր իրերի համադրությամբ, մեկ գույնի տոների միջոցով սովորեցնել ջրաներկով աշխատելու տեխնիկային, կատարել նախանկարներ:  <b>Դասընթացի խնդիրները.</b>  1. սովորեցնել թղթում գրագետ տեղադրել և երկրաչափորեն կառուցել տրված առաջադրանքը,  2. սովորեցնել ընկալել ու յուրացնել լուսաստվերային խաղերը, տոնային ու գծային կառուցումները, միջավայրի ազդեցությունը առարկաների վրա և հակառակը,  3. գծանկարի գծատոնային արտահայտչամիջոցներով, ճիշտ տոնային համադրումներով, հասնել կառուցողական, վերլուծական, լուսաստվերային պլաստիկայի,  4. ուսանողին ծանոթացնել ջրաներկի դասական տեխնիկային, կիրառման եղանակներին,  5. կատարել պարզ նատյուրմորտներ ու նախնականներ` օգտագործելով գրիզալի տեխնիկան,  6. սովորեցնել ջրաներկի տարբեր տեխնիկաները,  7. կատարել ազատ թեմայով դեկորատիվ ռճավորված աշխատանք,  8. ուսումնասիրել վարպետների ջրաներկով աշխատանքները:</p>		
<p><b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի`</b>  <b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն.</b>  1. ներկայացնելու գծանկարի դերն ու նշանակությունը,  2. թվարկելու գծանկարչության տարրական հասկացությունները,  3. բացատրելու լույսի ու ստվերի, գծի տոնի համակցումը,  4. ցուցադրելու առարկաների գրագետ չափագրման և թղթի մեջ կառուցման ձևերը,</p>		

<p>5. մեկնաբանելու համաչափության մասին մոտեցումները,</p> <p>6. ներկայացնելու գունանկարչության դերն ու նշանակությունը, հիմնական հասկացությունները,</p> <p>7. նկարագրելու աշխատանքի ընթացքը, նաև մեկ գույնի տոներով աշխատելու տեխնիկան,</p> <p>8. բնութագրելու գունային և տոնային ներդաշնակ համադրման սկզբունքներն ու կատարման ձևերը:</p> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ.</b></p> <p>1. գծի տոնի միջոցով ստանալու նյութականություն,</p> <p>2. հարթ մակերեսի վրա ստանալու եռաչափ ծավալներ,</p> <p>3. օգտագործելու գիծը, տոնը, կիսատոնը՝ լույսն ու ստվերը ստանալու համար,</p> <p>4. կատարելու գունատոնային աշխատանք թղթի մեջ գրագետ տեղադրելով պարզ կենցաղային իրեր և տարբեր առարկաներ,</p> <p>5. կատարելու նախանկարներ՝ օգտագործելով ջրաներկին հատուկ տարբեր նկարչական տեխնիկաներ,</p> <p>6. ստանալու դեկորատիվ հորինվածք օգտագործելով երկրաչափական ծավալներ,</p> <p>7. կատարելու նախանկարներ կենցաղային իրերից:</p>
<p><b>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնադրույնները.</b></p> <p><b>Ա2.</b> Ճանաչելու արվեստի ակնառու գործիչների ստեղծագործությունները և դասակարգելու ըստ արվեստի տեսակների և ժանրերի:</p> <p><b>Բ2.</b> Դեկորատիվ-կիրառական արվեստի առարկաների նախագծման և էսքիզավորման աշխատանքներում ցուցադրելու նկարչության հնարները և բացատրելու դրանց ընտրությունը:</p> <p><b>Բ3.</b> Դեկորատիվ-կիրառական արվեստի առարկաների ստեղծման աշխատանքներում մշակելու և կիրառելու ազգային զարդարվեստի մոտիվները, մեկնաբանելու դրանց իմաստային նշանակությունը:</p> <p><b>Բ4.</b> Ստեղծելու և վերարտադրելու դեկորատիվ-կիրառական արվեստի առարկաներ՝ ինքնուրույն ընտրելով տեխնիկական և տեխնոլոգիական կատարման եղանակները:</p> <p><b>Բ5.</b> Հիմնավորելու սեփական կոնցեպտուալ նախագծերի լուծումները:</p>
<p><b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <p>1. խոսքային մեթոդները, 2. զննական մեթոդները, 3. գործնական մեթոդները, 4. հետաքրքրությունների խթանման մեթոդները, 5. ինտերակտիվ-կառուցողական մեթոդները, 6. համագործակցային ուսուցման մեթոդները, 7. քննադատական մտածողության մեթոդները, 8. խմբային աշխատանքի մեթոդները, 9. ինքնուրույն աշխատանքի մեթոդները, 10. վերահսկողության մեթոդները:</p>
<p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <p><b>Գնահատվում է առանց եզրափակիչ գնահատման՝</b> առավելագույն 20 միավոր՝ երկու ընթացիկ քննություններով՝ 9 միավոր, որից 1-ին ընթացիկին տրվում է 0-4, իսկ 2-րդին՝ 0-5 միավոր: Ընթացքում իրականացվող ընթացիկ ստուգումներին տրվում է 0-8 միավոր և 0-3 միավոր տրվում է ինքնուրույն աշխատանքների կատարման համար:</p>
<p><b>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b></p> <p><b>Գծանկարչություն 1</b></p> <p><b>Թեմա 1.1.</b> Ներածություն: Գծանկարչության դերն ու նշանակությունը: Հիմնական հասկացությունները: Հասկացություն լույսի ու ստվերի, գծի տոնի, համակցման վերաբերյալ: <b>Թեմա 1.2.</b> Նատյուրմորտ գիպսե որևէ երկրաչափական մարմնով (բուրգ, գլան, գունդ, վեցանիստ և այլն) կտորե ծալքի համադրությամբ: <b>Թեմա 1.3.</b> Նատյուրմորտ գիպսե երկրաչափական մարմնով (բուրգ, գունդ, վեցանիստ և այլն), ափսեի մեջ դրված մրգով՝ կտորի ծալքի համադրությամբ: <b>Թեմա 1.4.</b> Նատյուրմորտ սափորի մեջ տեղադրված ճյուղով, տերևով, ծաղիկով՝ դեկորատիվ մոտեցմամբ: <b>Թեմա 1.5.</b> Նատյուրմորտ պարզ գիպսե զարդանախշով, բանջարեղեններով՝ կտորի ծալքերի համադրությամբ: <b>Թեմա 1.6.</b> Նատյուրմորտ գիպսե զարդանախշով, սափորով, մրգերով՝ կտորի ծալքերի համադրությամբ:</p> <p><b>Գունանկարչություն 2</b></p> <p><b>Թեմա 2.1.</b> Ներածություն: Գունանկարչության դերն ու նշանակությունը: Հիմնական հասկացությունները: <b>Թեմա 2.2.</b> Նատյուրմորտ երկու սափորով (մեկը՝ հորիզոնական, մյուսը՝ ուղղահայաց, մեկ գույնով (գրիզալ), մրգով՝ կտորի ծալքերի համադրությամբ: <b>Թեմա 2.3.</b> Նատյուրմորտ մրգերով, սափորով, ափսեով՝ գունային երանգներով կտորների համադրությամբ: <b>Թեմա 2.4.</b> Նատյուրմորտ փայտե (ծղոտե, կավե) ափսեով, սափորում դրված ճյուղերով կամ վրձիններով, պարզ կարպետով, մրգերով՝ տաք տոնայնությամբ կտորների համադրությամբ: <b>Թեմա 2.5.</b> Նատյուրմորտ պարզ գիպսե զարդանախշով, մրգերով, փայտե գդալով, ապակյա կենցաղային իրերով՝ տաք և սառը գույների կտորի ծալքերով: <b>Թեմա 2.6.</b> Նատյուրմորտ ապակյա, մետաղյա, կավե կենցաղային իրերով տաք և սառը գույների կտորի ծալքերով:</p>

**14. Հիմնական գրականության ցանկ.**

1. Ջովանի Զիվարդի, Գծանկարչություն, Ամբողջական ուղեցույց, 2015:
2. Նիկոլայ Բելով, Գծանկարի տեխնիկայի հիմունքներ, 2012:
3. Барщ А., Наброски и зарисовки, М., 1970.
4. Белов Н. , Основы техники рисунка, 2012.
5. Бесчастнов Н. П., Изображение растительных мотивов, М., 2004.
6. Кузин В. С., Наброски и зарисовки. – М.,1981.
7. Материалы и техники рисунка. Под ред. В. А. Королева, М., 1984.
8. Ростовцев Н. Н., Учебный рисунок, М., 1976.
9. Сергеев А., Учебный натюрморт, М., 1955.
10. С. Ломов, С. Аманжолов, Цветоведение. Учебное пособие, 2015.

1. 0404/B18	2. Գունատեսություն	3. 2 ECTS կրեդիտ
4. 2 ժամ /շաբ.	5.4/26/0	
6. 2-րդ կիսամյակ	7. Առանց եզրափակիչ գնահատման	
<b>8. Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ ընդհանուր տեղեկություններ գույնի, նրա ֆիզիկական հիմքի, քրոմատիկ, աքրոմատիկ և հակադիր գույների մասին: Սովորեցնել ստեղծագործական աշխատանքներում ճիշտ օգտագործել գունային հարաբերությունները:</b> <b>Դասընթացի խնդիրները.</b> <ol style="list-style-type: none"><li>1. ուսանողին սովորեցնել գունային հարաբերությունների ճիշտ օգտագործում՝ ելնելով գունատեսության առանձնահատկություններից,</li><li>2. քրոմատիկ և աքրոմատիկ գույների համատեղում,</li><li>3. գույների հոգեբանական և ֆիզիկական ազդեցություն:</li></ol>		
<b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b> <b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն.</b> <ol style="list-style-type: none"><li>1. թվարկելու հիմնական գույները, ներկայացնելու դրանց ճիշտ օգտագործումը, միմյանց հետ համադրելու ու խառնուրդներ ստանալու եղանակները:</li></ol> <b>բ. գործնական մասնագիտական կարողություններ.</b> <ol style="list-style-type: none"><li>1. կատարելու գունային ճիշտ վերլուծություններ:</li></ol>		
<b>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնադրյունները.</b> <b>Բ3.</b> Դեկորատիվ-կիրառական արվեստի առարկաների ստեղծման աշխատանքներում մշակելու և կիրառելու ազգային զարդարվեստի մոտիվները, մեկնաբանելու դրանց իմաստային նշանակությունը: <b>Բ4.</b> Ստեղծելու և վերարտադրելու դեկորատիվ-կիրառական արվեստի առարկաներ՝ ինքնուրույն ընտրելով տեխնիկական և տեխնոլոգիական կատարման եղանակները: <b>Բ6.</b> Պատճենելու ԴԿԱ (մետաղի, փայտի, գործվածքի գեղարվեստական ձևավորման, մանրանկարի, խեցեգործության) առարկաներ:		
<b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b> <ol style="list-style-type: none"><li>1. <b>խոսքային մեթոդները</b> (դասախոսությունը, բացատրումը, ներկայացումը, ընթերցումը, երկխոսությունը և այլն),</li><li>2. <b>զննական մեթոդները</b> (զծագրերի, նկարների և զննական պարագաների դիտումն ու ցուցադրումը և այլն),</li><li>3. <b>գործնական մեթոդները</b> (առաջադրանքները, վարժությունները, տնային առաջադրանքի կատարումը և այլն),</li><li>4. <b>հետաքրքրությունների խթանման մեթոդները</b> (հետաքրքիր դեպքեր հայ և համաշխարհային արվեստի և մշակույթի պատմությունից՝ արվեստագետների կյանքի ներկայացմամբ հուզական խթանում և այլն),</li><li>5. <b>ինտերակտիվ-կառուցողական մեթոդները</b> (խճանկար, ուսումնական բանավեճ, դերային խաղ, աշխատանք սկզբնադրյունների հետ և այլն),</li><li>6. <b>համագործակցային ուսուցման մեթոդները</b> (թիմային առաջադրանքների կատարում, խմբային ուսումնասիրություն և այլն),</li><li>7. <b>քննադատական մտածողության մեթոդները</b> (տնային աշխատանքների վերլուծություններ և այլն),</li><li>8. <b>խմբային աշխատանքի մեթոդները</b> (մտածիր – գույգ կազմիր – քննարկիր, ձևակույտ, ուսումնական</li></ol>		

<p>մրցույթ և այլն),</p> <p>9. <b>ինքնուրույն աշխատանքի մեթոդները</b> (ինքնուրույն աշխատանք սկզբնաղբյուրներով, ինտերնետային կայքերով և այլն),</p> <p>10. <b>վերահսկողության մեթոդները</b> (գրավոր, բանավոր վերահսկողություն, ծրագրավորված և ոչ ծրագրավորված և այլն):</p>
<p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b>  <b>Գնահատվում է առանց եզրափակիչ գնահատման՝</b> առավելագույն 20 միավոր՝ երկու ընթացիկ քննություններով՝ առավելագույնը 9 միավոր, որից 1-ին ընթացիկը գնահատվում է 0-4, իսկ 2-րդը՝ 0-5 միավոր, 0-8 միավոր տրվում է ինքնուրույն աշխատանքների կատարման համար և 0-3 միավոր՝ մասնակցության համար:</p>
<p><b>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b>  <b>Թեմա 1.</b> Ներածություն: Գունատեսություն առարկայի դերն ու նշանակությունը: <b>Թեմա 2.</b> Լույսի և գույնի ֆիզիկական հատկություններն ու բնույթը: <b>Թեմա 3.</b> Գունային տիրույթներ և համակարգեր: <b>Թեմա 4.</b> Գույնի ընկալման հոգեֆիզիոլոգիա: Գույնի ընկալման երևույթները: <b>Թեմա 5.</b> Գույնի ընկալման ասոցիատիվ ասպեկտները: <b>Թեմա 6.</b> Գույնը տեղեկատվական և նշանային համակարգերում: <b>Թեմա 7.</b> Գույնի կոմպոզիցիոն գործառույթները: <b>Թեմա 8.</b> Ստեղծագործական առաջադրանքի գունային սխեմաների մշակում:</p>
<p><b>14. Հիմնական գրականության ցանկ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. В. Медведев: Цветоведение и колористика. Учебное пособие Страта, 2020 г.</li> <li>2. Ю.Аксенов, М. Левидова, Цвет и линия, 1976.</li> <li>3. Цветоведение и колористика. Курс лекций. — СПб.: ИПЦ СПГУТД, 2005.</li> <li>4. Ильина О. В., Бондарева К. Ю. Цветоведение и колористика: учебное пособие / ГОУ ВПО СПбГТУРП. СПб., 2008.</li> </ol>

<b>1. 0404/B19</b>	<b>2. Գործվածքի գեղարվեստական ձևավորում-1</b>	<b>3. 4 ECTS կրեդիտ</b>
<b>4. 2 ժամ/շաբ.</b>	<b>5. 8/52/0</b>	
<b>6. 2-րդ կիսամյակ</b>	<b>7. Առանց ընթացիկ քննությունների գնահատման</b>	
<p><b>8. Դասընթացի նպատակն է ուսանողին սովորեցնել Մարաշի, Այնթապի և Կարինի /Ոսկեթել/ ասեղնագործության կարատեսակները ինչպես նաև հեյունագործ և ասեղնագործ ժանյակների, ոչ հենքային, հանգուցավոր գործվածքների (մաքրային գործվածքներ, մաքրամե) կատարման ձևերը:</b></p> <p><b>Դասընթացի խնդիրները.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. սովորեցնել Մարաշի, Այնթապի և Կարինի /Ոսկեթել/ ասեղնագործության տեխնիկական նկարների և սխեմատիկ պատկերների կառուցում ըստ ասեղնագործվող զարդապատկերի,</li> <li>2. սովորեցնել ըստ տեխնիկական նկարի և սխեմատիկ կառուցվածքի տարբերակել նախագծային տեսակները,</li> <li>3. սովորեցնել ըստ կատարեսակների նախապատրաստել թելերը,</li> <li>4. ստեղծել ասեղնագործ աշխատանքներ Մարաշի, Այնթապի և Կարինի /Ոսկեթել/ ասեղնագործության տեսակներով /անձեռոցիկներ, գլխաշորեր, սփռոցներ/,</li> <li>5. սովորեցնել ճանաչել և տարբերակել հեյունագործ և ասեղնագործ ժանյակների տեխնիկական նկարները և սխեմատիկ պատկերները,</li> <li>6. սովորեցնել կառուցել հեյունագործ և ասեղնագործ ժանյակների տեխնիկական նկարներ՝ հաշվի առնելով առանձնահատկությունները և զարդամոտիվները,</li> <li>7. սովորեցնել ըստ կատարեսակների նախապատրաստել թելերը,</li> <li>8. ստեղծել գործնական աշխատանքներ /անձեռոցիկներ, գլխաշորեր, սփռոցներ, պաննո/ հեյունագործ և ասեղնագործ ժանյակներով, մաքրամեի կատարման եղանակով:</li> </ol>		
<p><b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b>  <b>ա. մասնագիտական գիտելիք և ինստրություն.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. ըստ իրենց դպրոց-կենտրոնների ճանաչելու ասեղնագործության հիմնական կարատեսակները,</li> <li>2. ըստ սխեմատիկ կառուցվածքի և կիրառության ներկայացնելու նախագծային սխեմատիկ տեսակները,</li> <li>3. ըստ ասեղնագործության տեսակի բացատրելու թելերի մշակման եղանակները,</li> <li>4. ճանաչելու հեյունագործ և ասեղնագործ ժանյակների տեսակները՝ ըստ իրենց դպրոց-կենտրոնների,</li> <li>5. ըստ սխեմատիկ կառուցվածքի ներկայացնելու տեխնիկական նկարները և դրանց սխեմատիկ</li> </ol>		

<p>տեսակները,</p> <p>6. բացատրելու թելերի մշակման եղանակները՝ ըստ կատարվող աշխատանքի և կատարման ձևերի /հեյոնագործություն, ասեղնագործություն, ոչ հենքային, հանգուցավոր գործվածքների՝ մաքրքային գործվածքների, մաքրամեխ/</p> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ.</b></p> <p>1. կառուցելու տեխնիկական նկարներ, սխեմատիկ պատկերներ և օգտվելու դրանցից,</p> <p>2. ասեղնագործության համար ոճավորելու և մշակելու նախանկարներ,</p> <p>3. Մարաշի, Այնթապի և Կարինի /Ոսկեթել/ ասեղնագործության կարատեսակներով ասեղնագործելու /կրկնօրինակումներ, ստեղծագործական աշխատանքներ/,</p> <p>4. կառուցելու սխեմատիկ պատկերներ և օգտվելու դրանցից,</p> <p>5. ոճավորելու և մշակելու նախանկարներ,</p> <p>6. կատարելու գործնական աշխատանքներ /հեյոնագործ, ասեղնագործ ժանյակներ, ոչ հենքային, հանգուցավոր գործվածքներ՝ մաքրքային գործվածքներ, մաքրամեխ/:</p>
<p><b>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b></p> <p><b>Ա1.</b> Նկարագրելու հայ, համաշխարհային և դեկորատիվ-կիրառական արվեստի զարգացման կարևոր պատմական փուլերը և դրանց օրինաչափությունները, դասակարգելու և համեմատելու տարբեր ժամանակաշրջանների ստեղծագործությունները:</p> <p><b>Ա3.</b> Բացատրելու ԴԿԱ (գործվածքի, մետաղի, փայտի գեղարվեստական ձևավորման, մանրանկարի, խեցեգործության, տարազի, տիկնիկագործություն, ապակենկարչություն) առարկաների ստեղծման տեխնոլոգիաները և մեթոդները:</p> <p><b>Բ2.</b> Դեկորատիվ-կիրառական արվեստի առարկաների նախագծման և էսքիզավորման աշխատանքներում ցուցադրելու նկարչության հնարները և բացատրելու դրանց ընտրությունը:</p> <p><b>Բ3.</b> Դեկորատիվ-կիրառական արվեստի առարկաների ստեղծման աշխատանքներում մշակելու և կիրառելու ազգային զարդարվեստի մոտիվները, մեկնաբանելու դրանց իմաստային նշանակությունը:</p> <p><b>Բ4.</b> Ստեղծելու և վերարտադրելու դեկորատիվ-կիրառական արվեստի առարկաներ՝ ինքնուրույն ընտրելով տեխնիկական և տեխնոլոգիական կատարման եղանակները:</p> <p><b>Գ1.</b> Հայերեն և երկու օտար լեզուներով գրավոր և բանավոր ներկայացնելու մասնագիտական նախագծեր մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը և ցուցաբերելու հաղորդակցման կարողություն՝ հաշվի առնելով դեկորատիվ-կիրառական արվեստում միջմշակութային, սոցիալական ու անձնային փոխազդեցության գործոնները:</p>
<p><b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնասիրության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <p>1. խոսքային մեթոդները (դասախոսություն, բացատրում, պատմում եւ այլն),</p> <p>2. գննական մեթոդները (դիդակտիկ նյութերի ցուցադրում, դիտում եւ այլն),</p> <p>3. գործնական մեթոդները (ինքնուրույն առաջադրանքի կատարում եւ այլն),</p> <p>4. ճանաչողական-ստեղծագործական մեթոդները (բացատրական-ցուցադրական, պրոբլեմային-դրոնողական),</p> <p>5. ինտերակտիվ-կառուցողական մեթոդները (բանավեճ, աշխատանք բնագրի հետ եւ այլն):</p>
<p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <p>Առարկան գնահատվում է <b>առանց ընթացիկ գնահատման</b>, առավելագույնը 20 միավորով և հետևյալ բաղադրիչներով.</p> <p>1. ինքնուրույն աշխատանքներ 0-8 միավոր,</p> <p>2. եզրափակիչ քննություն 0-9 միավոր,</p> <p>3. մասնակցություն՝ 0-3 միավոր:</p>
<p><b>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b></p> <p><b>Թեմա 1.</b> Ներածություն: Առարկայի դերն ու նշանակությունը դեկորատիվ-կիրառական արվեստների համակարգում: Հիմնական հասկացությունները: <b>Թեմա 2.</b> Մարաշի ասեղնագործություն: <b>Թեմա 3.</b> Ոսկեթուղ՝ ոսկեթել ասեղնագործություն /Կարինի ազգային զգեստ/: <b>Թեմա 4.</b> Այնթապի ասեղնագործությունը: <b>Թեմա 5.</b> Հեյոնագործ ժանյակներ: <b>Թեմա 6.</b> Ասեղնագործ ժանյակներ /Վանի և Կարինի ժանյակագործություն/: <b>Թեմա 7.</b> Ոչ հենքային, հանգուցավոր գործվածքներ՝ մաքրքային գործվածք, մաքրամեխ:</p>
<p><b>14. Հիմնական գրականության ցանկ.</b></p> <p>1. Դավթյան Ս., Հայկական ասեղնագործության մասին, <a href="http://bass.asj-oa.am/2093/1/1961-12(79).pdf">http://bass.asj-oa.am/2093/1/1961-12(79).pdf</a></p> <p>2. Դավթյան Ս., Մարաշի Ասեղնագործություն, Ե. 1978:</p> <p>3. Դավթյան Ս., Հայկական ասեղնագործության մի հին նմուշ, <a href="https://www.matenadaran.am/ftp/data/Banber3/3.S.Davtyan.pdf">https://www.matenadaran.am/ftp/data/Banber3/3.S.Davtyan.pdf</a></p>

4. Հարությունյան Մ., Էջեր Արցախի գորգագործության և ասեղնագործության մասին, [http://publications.yso.am/wp-content/uploads/2015/11/Marine\\_Harutyunyan\\_422-431.pdf](http://publications.yso.am/wp-content/uploads/2015/11/Marine_Harutyunyan_422-431.pdf) .
5. Մնացականյան Ա. Շ., Հայկական զարդարվեստ, Ե., 1955: <https://cloud.mail.ru/public/BdkN/PwHKxrZht>
6. Մխիթարյան Լ., Հայկական ասեղնագործ ժանյակ, Ջանգալ, 2018:
7. Ս. Գալֆայան, Լ. Մխիթարյան, Հայկական միջնադարյան զարդարվեստը որպես ազգային տեքստիլ տեխնոլոգիաների ամրագրման միջոց, ՊԲՀ, 2002, 3/161:
8. Քյուրքյան Ա., Ն.Բազե Խաչերեան, Հայկական զարդարվեստ, Ե.. 2010:
9. Գործվածքի հայտնության քառուղիներում, Հայկական կարպետի և ասեղնագործության ցուցադրություն, «Փրկեալ Ձեռագործք Հայոց», Նարեկ Վան Աշուղաթոյանի հավաքածու, Ե. 2015:
10. Потебня Дарья Михайловна, Макраме, Самое полное и понятное пошаговое руководство для начинающих, Новейшая энциклопедия, Эксмо, 2019 г. Подробнее: <https://www.labirint.ru/books/725971/>
11. <http://shirak.asj-oa.am/160/1/110-115.pdf>
12. <https://folkartcenter.am/hy/content/>
13. <https://arar.sci.am/dlibra/publication/216516/edition/197230/content>
14. <https://medium.com/@vardanyananna/>

<b>1. 0403/B38</b>	<b>2. Նկարչություն -2</b>	<b>3. 11 ECTS կրեդիտ</b>
<b>4. 11 ժամ/շաբ.</b>	<b>5. 14/136/0</b>	
<b>6. 2-րդ կիսամյակ</b>	<b>7. Առանց եզրափակիչ գնահատման</b>	
<p><b>8.Դասընթացի նպատակն է</b> ծանոթանալ մարդու գլխի հատվածային մասերի կառուցմանը և պատկերմանը: Ուսումնասիրել և գծանկարի օրենքներին համապատասխան պատկերել մի քանի կենցաղային առարկաներ միասին (մեկ ամբողջության մեջ)՝ դեկորատիվ-երկրաչափական կառուցվածքով: Ուսանողներին սովորեցնել աշխատել տարբեր նյութերով, կատարել կարճատև նախանկարներ, նատյուրմորտներ, ստեղծագործական աշխատանքներ: Կատարել հորինվածքային ոճավորված աշխատանք: Հորինվածքը գրագետ տեղադրել թղթում, առարկաները նկարել վերլուծական, բովանդակային մոտեցմամբ՝ զգալով գունատոնային խաղերը, առարկաները, գունային, տոնային, լուսային փոխազդեցությունները, անդրադարձները:</p> <p><b>Դասընթացի խնդիրները.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. գծանկարի միջոցով ուսումնասիրել մեկ կամ մի քանի առարկաների կապը միմյանց և շրջապատի հետ,</li> <li>2. գծի տոնի միջոցով ցույց տալ առարկայի կառուցվածքը,</li> <li>3. առարկան կամ առարկաները ենթարկել դեկորատիվացման՝ պահպանելով նրանց ներքին բովանդակությունը,</li> <li>4. սովորեցնել տաք և սառը տոների հարաբերությունների միջոցով ստանալ ծավալներ,</li> <li>5. ձևավորել գունատոնային ճիշտ ընկալում և վերարտադրում, տարածաձավալային մտածելակերպ,</li> <li>6. սովորեցնել հորինվածքը թղթում գրագետ տեղադրելուն,</li> <li>7. կատարել հորինվածքային ոճավորված աշխատանք:</li> </ol> <p><b>9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. ներկայացնելու առարկաների գրագետ չափագրման և թղթի մեջ կառուցման ձևերը,</li> <li>2. ստանալու համոզիչ պատկեր՝ մեկ կամ մի քանի առարկայով՝ օգտագործելով գծանկարի հնարավորությունները,</li> <li>3. յուրաքանչյուր առարկայում տեսնելու ստեղծագործական տարր՝ ներկայացնելով այն դեկորատիվ-կիրառական մտածելակերպով,</li> <li>4. ճանաչելու գեղանկարչության տեսակները,</li> <li>5. ներկայացնելու գեղանկարի աշխատանքային գործընթացի հերթականությունը,</li> <li>6. ճանաչելու գեղանկարչության ոճերի լավագույն համաշխարհային օրինակները,</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. պատկերելու մարդու գլխի հատվածային մասերը (քիթ, բերան, աչք, ականջ),</li> <li>2. կատարելու նյութից ճեպանկարներ ու նախանկարներ,</li> <li>3. թղթում ստանալու եռաչափ ծավալներ,</li> <li>4. ընկալելու նյութի բովանդակությունը և ենթարկելու այն դեկորատիվացման՝ պահպանելով նրանց ներքին բովանդակությունը,</li> <li>5. ներկայացնելու ինքնուրույն կատարած աշխատանքները,</li> <li>6. աշխատելու տարբեր գեղանկարչական նյութերով,</li> </ol>		

<p>7. նկարելու նատյուրմորտներ՝ տարբեր նյութականություն ունեցող առարկաներով,</p> <p>8. կատարելու գեղանկարչական նախանկարներ :</p>
<p><b>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b></p> <p><b>Ա2.</b> Ճանաչելու արվեստի ակնառու գործիչների ստեղծագործությունները և դասակարգելու ըստ արվեստի տեսակների և ժանրերի:</p> <p><b>Բ2.</b> Դեկորատիվ-կիրառական արվեստի առարկաների նախագծման և էսքիզավորման աշխատանքներում ցուցադրելու նկարչության հնարները և բացատրելու դրանց ընտրությունը:</p> <p><b>Բ3.</b> Դեկորատիվ-կիրառական արվեստի առարկաների ստեղծման աշխատանքներում մշակելու և կիրառելու ազգային զարդարվեստի մոտիվները, մեկնաբանելու դրանց իմաստային նշանակությունը:</p> <p><b>Բ4.</b> Ստեղծելու և վերարտադրելու դեկորատիվ-կիրառական արվեստի առարկաներ՝ ինքնուրույն ընտրելով տեխնիկական և տեխնոլոգիական կատարման եղանակները:</p> <p><b>Բ5.</b> Հիմնավորելու սեփական կոնցեպտուալ նախագծերի լուծումները:</p>
<p><b>11. Գիրատվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <p>1. խոսքային մեթոդները, 2. գննական մեթոդները, 3. գործնական մեթոդները, 4. հետաքրքրությունների խթանման մեթոդները, 5. ինտերակտիվ-կառուցողական մեթոդները, 6. համագործակցային ուսուցման մեթոդները, 7. քննադատական մտածողության մեթոդները, 8. խմբային աշխատանքի մեթոդները, 9. ինքնուրույն աշխատանքի մեթոդները, 10. վերահսկողության մեթոդները:</p>
<p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <p><b>Գնահատվում է առանց եզրափակիչ գնահատման՝</b> առավելագույն 20 միավոր՝ երկու ընթացիկ քննություններով՝ 9 միավոր, որից 1-ին ընթացիկին տրվում է 0-4, իսկ 2-րդին՝ 0-5 միավոր: Ընթացքում իրականացվող ընթացիկ ստուգումներին տրվում է 0-8 միավոր և 0-3 միավոր տրվում է ինքնուրույն աշխատանքների կատարման համար:</p>
<p><b>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b></p> <p><b>Գծանկարչություն 1</b></p> <p><b>Թեմա 1.1.</b> Նատյուրմորտ գիպսե զարդանախշով, սափորով, մրգերով՝ կտորի ծալքերի համադրությամբ:</p> <p><b>Թեմա 1.2.</b> Մարդու գլխի կառուցվածքի հատվածային ուսումնասիրություն /ականջ, քիթ, աչք, շուրթեր/:</p> <p><b>Թեմա 1.3.</b> Գիպսե աչքի դեկորատիվ լուծումներով պատկերում՝ կտորի ծալքի համադրությամբ: <b>Թեմա 1.4</b> Նատյուրմորտ մի քանի կենցաղային /ապակի, մետաղ, կավ/ առարկաներով՝ կտորի ծալքի համադրությամբ:</p> <p><b>Գունանկարչություն 2</b></p> <p><b>Թեմա 2.1.</b> Նատյուրմորտ գիպսե աչքով (ականջ, քիթ), երաժշտական գործիքով՝ սառը տոնայնությամբ կտորի ծալքերի համադրությամբ: <b>Թեմա 2.2.</b> Նատյուրմորտ գունեղ կտորի ծալքերով, կարպետով, կենցաղային առարկաներով (կավե, մետաղե, փայտե և այլն), մրգով: Նախանկարների կատարում: <b>Թեմա 2.3.</b> Կատարել հորինվածքային աշխատանք հիմքում ունենալով կենցաղային տարբեր իրերի դասավորվածությունը՝ տաք և սառը կտորի ծալքերով: <b>Թեմա 2.4.</b> Նատյուրմորտ տարբեր նյութականություն ունեցող առարկաներով (սափոր, մետաղյա սկուտեղ, փայտե գդալ, ապակե շիշ)՝ հակադիր գունավորվածությամբ կտորի ծալքերով: <b>Թեմա 2.5.</b> Կատարել հորինվածքային ռճավորված դեկորատիվ աշխատանք:</p>
<p><b>14. Հիմնական գրականության ցանկ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Ջովանի Զիվարդի, Գծանկարչություն: Ամբողջական ուղեցույց, 2015:</li> <li>2. Նիկոլայ Բելով, Գծանկարի տեխնիկայի հիմունքներ, 2012:</li> <li>3. Белов Н. , Основы техники рисунка, 2012.</li> <li>4. Кузин В. С., наброски и зарисовки., М., 1981.</li> <li>5. Лушников Б. В., Рисунок. Портрет, М., 2002.</li> <li>6. Ли. Н. , Голова человека основы академического рисунка, 2010.</li> <li>7. Ростовцев Н. Н., Учебный рисунок, М., 1976.</li> <li>8. Сергеев А., Учебный натюрморт, М., 1955.</li> <li>9. Соловьев А., Смирнов Г., Алексеева Е. Учебный рисунок, М., 1967.</li> <li>10. Тихонов С. В., Демьянов В. Г., Подрезков В. Б., Рисунок, М., 1978.</li> <li>11. Петр Ревякин, Техника акварельной живописи, 2017.</li> <li>12. Изобразительное искусство, М. 2006.</li> <li>13. Изобразительное искусство, М., 2009.</li> <li>14. Искусство и ты, М., 2005.</li> <li>15. Искусство вокруг нас, М., 2005.</li> </ol>

16. Бесчастнов Н.П., Графика натюрморта: учеб. Пособие, М., 2008.  
 17. Бесчастнов Н.П., Графика пейзажа: учеб. Пособие, М., 2008.

<b>1. 0403/B20</b>	<b>2. Հետազոտության պլանավորում և մեթոդներ</b>	<b>3. 2 ECTS կրեդիտ</b>
<b>4. 2 ժամ/շաբ.</b>	<b>5. 30/0/0</b>	
<b>6. 3-րդ կիսամյակ</b>	<b>7. Առանց եզրափակիչ գնահատման</b>	
<p><b>8. Դասընթացի նպատակն է.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>ուսանողներին մոտ ձևավորել պատկերացումներ հետազոտական աշխատանքի իրականացման վերաբերյալ,</li> <li>ծանոթացնել ժամանակակից հետազոտման պլանավորման եղանակներին,</li> <li>ծանոթացնել ներկայումս օգտագործվող ծրագրավորման հետազոտական աշխատանքի մեթոդներին:</li> </ol>		
<p><b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>ներկայացնել հետազոտական աշխատանք,</li> <li>ճանաչել կիրառվող հետազոտության մեթոդները,</li> <li>բացատրել հետազոտության պլանավորման էությունը,</li> <li>տարբերակել հետազոտության օգտագործվող մեթոդներից մեկի առավելությունը:</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>ճիշտ պլանավորելու հետազոտական աշխատանքը,</li> <li>ընտրելու և գործնականում կիրառելու հետազոտության ճիշտ մեթոդները,</li> <li>վերլուծել խնդիրները և առաջարկել լուծման եղանակներ:</li> </ol> <p><b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>աշխատել թիմում:</li> <li>ստեղծել և մասնագիտական խմբին ներկայացնել (գրավոր, բանավոր, տեսասահիկի միջոցով) հետազոտության արդյունքը:</li> </ol>		
<p><b>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b></p> <p><b>Ա1.</b> Նկարագրելու հայ, համաշխարհային և դեկորատիվ-կիրառական արվեստի զարգացման կարևոր պատմական փուլերը և դրանց օրինաչափությունները, դասակարգելու և համեմատելու տարբեր ժամանակաշրջանների ստեղծագործությունները:</p> <p><b>Ա2.</b> Ճանաչելու արվեստի ակնառու գործիչների ստեղծագործությունները և դասակարգելու ըստ արվեստի տեսակների և ժանրերի:</p> <p><b>Ա3.</b> Բացատրելու ԴԿԱ (գործվածքի, մետաղի, փայտի գեղարվեստական ձևավորման, մանրանկարի, խեցեգործության, տարագի, տիկնիկագործություն, ապակենկարչություն) առարկաների ստեղծման տեխնոլոգիաները և մեթոդները:</p> <p><b>Բ3.</b> Դեկորատիվ-կիրառական արվեստի առարկաների ստեղծման աշխատանքներում մշակելու և կիրառելու ազգային զարդարվեստի մոտիվները, մեկնաբանելու դրանց իմաստային նշանակությունը:</p> <p><b>Բ5.</b> Հիմնավորելու սեփական կոնցեպտուալ նախագծերի լուծումները:</p> <p><b>Բ7.</b> Հիմնավելով ԴԿԱ ոլորտի արդի և հիմնարար գիտելիքների վրա՝ կազմակերպելու սեփական մասնագիտական գործունեությունը:</p> <p><b>Գ1.</b> Հայերեն և երկու օտար լեզուներով գրավոր և բանավոր ներկայացնելու մասնագիտական նախագծեր, մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը և ցուցաբերելու հաղորդակցման կարողություն՝ հաշվի առնելով դեկորատիվ-կիրառական արվեստում միջմշակութային, սոցիալական ու անձնային փոխազդեցության գործոնները:</p> <p><b>Գ2.</b> Աշխատելու թիմում, արդյունավետ շփվելու գործընկերների, ղեկավարության և պատվիրատուների հետ, պատասխանատվություն կրելու սեփական և թիմի աշխատանքի արդյունքների և կայացրած որոշումների համար՝ պահպանելով էթիկայի նորմերը:</p> <p><b>Գ4.</b> Մասնագիտական խնդիրների արդյունավետ լուծման նպատակով իրականացնելու անհրաժեշտ տեղեկատվության որոնում՝ օգտագործելով տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաները:</p> <p><b>Գ5.</b> Վարելու մասնագիտական գործնական բանակցություններ՝ ցուցաբերելով դեկորատիվ-կիրառական արվեստի կրթական և արտադրական ոլորտային խնդիրները լուծելու կարողություն:</p>		



<p><b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնասիրության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. դասախոսություն, քննարկումներ տեղում, գրույց, սլայդերի և տեսաֆիլմերի ցուցադրում:</li> <li>2. ինքնուրույն աշխատանքների կատարում:</li> <li>3. տնային և անհատական տնային առաջադրանքներ,</li> <li>4. ստուգողական աշխատանքներ,</li> <li>5. ինքնուրույն աշխատանքներ:</li> </ol>
<p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b>  <b>Գնահատվում է առանց եզրափակիչ գնահատման՝</b> առավելագույն 20 միավոր՝ երկու ընթացիկ քննություններով՝ 9 միավոր, որից 1-ին ընթացիկին տրվում է 0-4, իսկ 2-րդին՝ 0-5 միավոր: 0-8 միավոր տրվում է ինքնուրույն աշխատանքների կատարման համար և 0-3 միավոր՝ մասնակցության համար:</p>
<p><b>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b>  <b>Թեմա 1.</b> Գիտահետազոտական աշխատանքների դասակարգումը: <b>Թեմա 2.</b> Հետազոտման նպատակի օբյեկտի ընտրություն: <b>Թեմա 3.</b> Հետազոտման ժամանակակից մեթոդները: <b>Թեմա 4.</b> Հետազոտման պլանավորում: <b>Թեմա 5.</b> Գրականության ուսումնասիրման եղանակներ և շտեմարանները: <b>Թեմա 6.</b> Ուսումնասիրության հաջողականություն և ռացիոնալ եղանակների ընտրություն: <b>Թեմա 7.</b> Ստացված արդյունքների քննարկում և վերլուծություն: <b>Թեմա 8.</b> Հետազոտությունների քանակական և որակական վերլուծություն: <b>Թեմա 9.</b> Գիտական աշխատանքի ձևակերպում. հոդված, թեզիս, թեզ, զեկուցում, մենագրություն, ձեռնարկ, ատենախոսություն, հաշվետվություն և այլն, դրա մշակման եղանակները: <b>Թեմա 10.</b> Ուսանողների ինքնուրույն աշխատանքը, ձևերը և տեսակները:</p>
<p><b>14. Հիմնական գրականության ցանկ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Գաբրիելյան Վ., Գրավոր խոսք, Եր., 2007:</li> <li>2. Հովհաննիսյան Գ., Գալստյան Ն., Մոդոնյան Մ., Մալխասյան Մ., Գիտահետազոտական աշխատանք կատարելու հիմնական սկզբունքները. մեթոդական ցուցումներ, Եր., 2014:</li> <li>3. Кузин Ф., Дипломная работа. Методика написания, правила оформления и порядок защиты. Медические указания, М., 1990.</li> <li>4. Методические рекомендации по подготовке и написанию научных статей для авторитетных изданий, индексируемых международными базами SCOPUS/ WEB OF SCIENCE. <a href="https://lib.almu.edu.kz/images/uploads/files/db02bf4cb3b14d182e092e0648e65113.pdf">https://lib.almu.edu.kz/images/uploads/files/db02bf4cb3b14d182e092e0648e65113.pdf</a></li> <li>5. Меледина Т. В., Данина М. М., Методы планирования и обработки результатов научных исследований. Учебн. пособие, С-Петербург, 2015.</li> <li>6. Сидняев Н. И., Теория планирования эксперимента и анализ статистических данных, Юрайт, 2015.</li> <li>7. Кукушкина. В. В., Организация научно-исследовательской работы студентов (магистров)//учебное пособие.-М., 2014.</li> <li>8. Петрова С. А., Ясинская И. А.. Основы исследовательской деятельности, М., 2010.</li> <li>9. Creswell, J. W., Educational research: Planning, conducting, and evaluating quantitative and qualitative research (3rd). Upper Saddle River, NJ: Prentice Hall.2008.</li> </ol>

1. 0404/ B	2. Օրնամենտալ ոճավորում Հ/Բ	3. 4 ECTS կրեդիտ
4. 4 ժամ /շաբ.	5. 10/50/0	
6. 3-րդ կիսամյակ	7. Եզրափակիչ գնահատումով	
<p><b>8. Դասընթացի նպատակն է՝</b>  Ծանոթացնել հայկական ավանդական զարդանախշի (օրնամենտ) հորինվածքային և ոճավորման առանձնահատկություններին, զարդարվեստի միջոցով խթանելու գեղագիտական և գեղարվեստական մտածողության զարգացումը: Ծանոթացնել հետազոտական աշխատանք կատարելու մեթոդներին:</p> <p><b>Դասընթացի խնդիրները</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. տարբերակել խորհրդանիշները զարդարվեստում և իմանալ դրանց նշանակությունը,</li> <li>2. տարբերակել զարդարվեստի տեսակներն ըստ կառուցվածքի,</li> <li>3. զարգացնել ուսանողների մոտ գծագրական գործիքների միջոցով գեղարվեստական պատկերներ ստանալու ունակությունները:</li> <li>4. ընտրված թեմայի շուրջ կատարել հետազոտական աշխատանք:</li> </ol>		
<p><b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b>  <b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. ճանաչելու տարբեր խորհրդանիշները զարդարվեստում,</li> <li>2. ճանաչելու և տարբերակելու օրնամենտի տեսակները,</li> </ol>		

<p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <p>Առարկան գնահատվում է <b>առանց ընթացիկ քննությունների գնահատման</b></p> <p>1. ինքնուրույն աշխատանքներ՝ 0-8 միավոր,</p> <p>2. մասնակցություն՝ 0-3 միավոր,</p> <p>3. եզրափակիչ քննություն՝ 0-9 միավոր:</p>
<p><b>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b></p> <p><b>Թեմա 1.</b> Ներածություն: Մետաղի գեղարվեստական մշակում առարկան: <b>Թեմա 2.</b> Մետաղի գեղարվեստական մշակման պատմությունից, հայկական ոսկերչություն և արձայագործության ավանդույթներ: <b>Թեմա 3.</b> Արտասահմանյան առաջադեմ ձեռնարկություններ: <b>Թեմա 4.</b> Իրերի նախնական էսքիզավորման հիմնական կանոնները: Էսքիզների կատարում: <b>Թեմա 5.</b> Մետաղի մշակման տեսակները և մեթոդները: <b>Թեմա 6.</b> Էսքիզների փոխանցումը մետաղյա նախապատրաստվածքի մակերեսին /մեթոդների բազմազանությունը/: <b>Թեմա 7.</b> Անվտանգության կանոնների պահպանումը և դրա կարևորությունը: <b>Թեմա 8.</b> Չափագրում: <b>Թեմա 9.</b> Մետաղի մշակման ժամանակակից տեխնոլոգիաներ: <b>Թեմա 10.</b> Մետաղի մշակման գործիքներ, սարքեր և սարքավորումներ: <b>Թեմա 11.</b> Մետաղի ընտրություն և սկզբնական մշակում: Հարգադրոշմի որոշում: <b>Թեմա 12.</b> ԴԿԱ առարկաների նախագծում և ձևավորում ազգային զարդամոտիվներով: Էսքիզի տեղափոխում նյութի վրա և մակերեսային փորագրություն:</p>
<p><b>14. Հիմնական գրականության ցանկ.</b></p> <p>1. Ա. Բ. Գևորգյան, Արհեստներն ու կենցաղը հայկական մանրանկարներում, Երևան, 1973:</p> <p>2. Ս. Ս. Դավթյան, Դրվագներ հայկական միջնադարյան կիրառական արվեստի պատմությունից, Երևան, 1981:</p> <p>3. А. Гилодо, О. Иглина, Современное ювелирное искусство, М., 2004.</p>

4. Б. Т. Никифоров, В. В. Чернов, Ювелирное искусство, высшее образование, 2006.
5. В. А. Абрамян, Ювелирное искусство Армении, С ДРЕВНЕЙШИХ ВРЕМЕН ДО НАШИХ ДНЕЙ, 1983.
6. В. И. Марченков, Ювелирное дело, Практическое пособие, 3-е изд, перераб. и доп, М., 1992.
7. Д. Стоун, Ювелирная энциклопедия. Драгоценные камни, виды изделий, Издательский дом Кристалл, Санкт-Петербург, 2008.
8. С. В. Простаков, Ювелирное дело - учебный курс, Издательство: Ростов н/Д., Феникс, 1999.
9. С. Н. Зубрилина, Справочник по ювелирному делу, Издательство: Ростов н/Д., Феникс, 2006.
10. Э. Бреполь, Теория и практика ювелирного дела, М., Книга по Требованию, 2013.

<b>1. 0403/B41</b>	<b>2. Ակարչություն -4</b>	<b>3.9 ECTS կրեդիտ</b>
<b>4. 8 ժամ/շաբ.</b>	<b>5. 12/108/0</b>	
<b>6. 4-րդ կիսամյակ</b>	<b>7. Առանց եզրափակիչ գնահատման</b>	
<p><b>8. Դասընթացի նպատակն է ծանոթանալ գանգի, տաշվածքով զիպսե գլխի անատոմիական կառուցվածքին, ուսանողներին սովորեցնել գծանկարել մարդու գանգ, տաշվածքով և անատոմիական գլուխ, կատարել դեկորատիվ ստեղծագործական աշխատանք: Ուսանողներին սովորեցնել իրենց գեղանկարչական աշխատանքների վերաբերյալ կատարել քննակումներ, վերլուծություններ առաջադրանքները հասցնելով տրամաբանական ավարտին: Մի քանի առարկաներով կատարելու գեղանկարի ստեղծագործական աշխատանքներ, քաղաքային կամ գյուղական պատկերներով նկարել դեկորատիվ գունավորված բնապատկերներ:</b></p> <p><b>Դասընթացի խնդիրները.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. գծանկարի միջոցով կատարել նախանկարներ և ճեպանկարներ,</li> <li>2. ուսումնասիրել հեռանկարը, լույսը, ստվերը, զիծը, տոնը որպես ամբողջական միջավայր,</li> <li>3. ուսումնասիրվող իրերի համադրությամբ ստանալ մեկ ընդհանրական պատկեր՝ հորինվածքային-դեկորատիվ աշխատանք,</li> <li>4. գունախառնի տաք և սառը տոների միջոցով ստանալ եռաչափ տարածություն:</li> </ol>		
<p><b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b>  <b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. ներկայացնելու գծանկարի հորինվածքում հեռանկարի կառուցման ձևերը,</li> <li>2. ներկայացնելու և մեկնաբանելու գծանկարի հեռանկարում իրերի ու առարկաների կրճատման առանձնահատկությունները,</li> <li>3. գեղանկարում ներկայացնելու տարբեր նյութականությամբ առարկաների յուրահատկությունները,</li> <li>4. բացատրելու գեղանկարչական նյութը դեկորատիվության հասցնելու առանձնահատկությունները,</li> <li>5. նշելու գեղանկարչական մի քանի նյութերով ստեղծագործական աշխատանքի առանձնահատկությունները:</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. կատարելու գծանկարի նախանկարներ և ճեպանկարներ՝ տարբեր նյութերով,</li> <li>2. գծանկարում ստանալու ծավալ՝ զծի, տոնի, լույսի և ստվերի օգնությամբ,</li> <li>3. կատարելու համաչափ, գրագետ, վերլուծական կառուցում,</li> <li>4. հասցնելու առաջադրանքները տրամաբանական ավարտուն տեսքի,</li> <li>5. կատարելու դեկորատիվ հորինվածքային ճեպանկարներ, ավարտուն նախանկարներ,</li> <li>6. կատարելու գունատոնային, գունաձավալային հստակ, ներդաշնակ համադրում,</li> <li>7. գունանկարում պատկերվող նյութի վերաբերյալ կատարելու հետազոտական աշխատանքներ և օգտագործելու դրանք ստեղծագործական աշխատանքներում,</li> </ol>		
<p><b>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b></p> <p><b>Ա2.</b> Ճանաչելու արվեստի ակնառու գործիչների ստեղծագործությունները և դասակարգելու ըստ արվեստի տեսակների և ժանրերի:</p> <p><b>Բ2.</b> Դեկորատիվ-կիրառական արվեստի առարկաների նախագծման և էսքիզավորման աշխատանքներում ցուցադրելու նկարչության հնարները և բացատրելու դրանց ընտրությունը:</p> <p><b>Բ3.</b> Դեկորատիվ-կիրառական արվեստի առարկաների ստեղծման աշխատանքներում մշակելու և կիրառելու ազգային զարդարվեստի մոտիվները, մեկնաբանելու դրանց իմաստային նշանակությունը:</p> <p><b>Բ4.</b> Ստեղծելու և վերարտադրելու դեկորատիվ-կիրառական արվեստի առարկաներ՝ ինքնուրույն ընտրելով տեխնիկական և տեխնոլոգիական կատարման եղանակները:</p> <p><b>Բ5.</b> Հիմնավորելու սեփական կոնցեպտուալ նախագծերի լուծումները:</p>		

<p><b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <p>1. խոսքային մեթոդները, 2. գննական մեթոդները, 3. գործնական մեթոդները, 4. հետաքրքրությունների խթանման մեթոդները, 5. ինտերակտիվ-կառուցողական մեթոդները, 6. համագործակցային ուսուցման մեթոդները, 7. քննադատական մտածողության մեթոդները, 8. խմբային աշխատանքի մեթոդները, 9. ինքնուրույն աշխատանքի մեթոդները, 10. վերահսկողության մեթոդները:</p>
<p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <p><b>Գնահատվում է առանց եզրափակիչ գնահատման`</b> առավելագույն 20 միավոր` երկու ընթացիկ քննություններով` 9 միավոր, որից 1-ին ընթացիկին տրվում է 0-4, իսկ 2-րդին` 0-5 միավոր: Ընթացքում իրականացվող ընթացիկ ստուգումներին տրվում է 0-8 միավոր և 0-3 միավոր տրվում է ինքնուրույն աշխատանքների կատարման համար:</p>
<p><b>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b></p> <p><b>Գծանկարչություն 1</b></p> <p><b>Թեմա 1.</b> Մարդու գանգ` կտորի ծալքի համադրությամբ: Նախնական ճեպանկարների, նախանկարների կատարում: <b>Թեմա 2.</b> Մարդու բնական կամ գիպսե գանգի դեկորատիվ ծավալապաշտական աշխատանք: Կատարել նախանկարներ: <b>Թեմա 3.</b> Ա.Դյուրերի տաշվածքով մեթոդական գլուխ կտորի համադրությամբ: <b>Թեմա 4.</b> Մարդու գիպսե անատոմիական գլուխ: Մարդու գիպսե գլխի ուսումնասիրում վարպետների գծանկարներից. նախանկարներ և ճեպանկարներ կրկնօրինակում: <b>Թեմա 5.</b> Գիպսե գլուխ (Կոլտեր, Սոկրատ, Գատամելատ, Վեներա, Հերա) 2 դիրքից` մեկ թղթի վրա:</p> <p><b>Գունանկարչություն 2</b></p> <p><b>Թեմա 2.1.</b> Նատյուրմորտ սափորով, մրգով` դրված լուսամուտագոգին` դրսի բնապատկերով: <b>Թեմա 2. 2.</b> Նատյուրմորտ գիպսե կամ բնական գանգով, երաժշտական գործիքով, մոմակալով` մոխրագույն (կապույտ) տոնայնությամբ կտորի ծալքերով: <b>Թեմա 2. 3.</b> Նատյուրմորտ կենցաղային իրերով, գրենական պիտույքներով, լիմոնով, ափսեով` կապույտ տոնայնությամբ ծալքերի համադրությամբ: <b>Թեմա 2.4.</b> Քաղաքային կամ գյուղական բնապատկեր` դեկորատիվ գունեղ գունավորմամբ: <b>Թեմա 2.5.</b> Մի քանի առարկաներով ստեղծագործական աշխատանք` կուբիստական կոնցեպտով:</p>
<p><b>14. Հիմնական գրականության ցանկ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Բելով Ն. , Գծանկարի տեխնիկայի հիմունքներ, 2012:</li> <li>2. Ջովանի Չիվարդի, Գծանկարչություն: Ամբողջական ուղեցույց, 2015:</li> <li>3. Барщ А., Наброски и зарисовки, М., 1970.</li> <li>4. Белов Н. , Кузин В. С., Наброски и зарисовки, М., 1981.</li> <li>5. Ли Н. Г., Основы учебного академического рисунка, М. , 2006.</li> <li>6. Ли Н. Г., Голова человека основы академического рисунка, 2010.</li> <li>7. Лушников Б. В., Рисунок. Портрет, М., 2002.</li> <li>8. Материалы и техники рисунка. Под ред. В. А. Королева, М., 1984.</li> <li>9. Основы техники рисунка, 2012.</li> <li>10. Петр Ревякин, Техника акварельной живописи, 2017.</li> <li>1. Прокофьев Н., Живопись. Техника живописи и технология живописных материалов, 2013</li> <li>11. Ростовцев Н.Н., Рисунок. Живопись. Композиция: Хрестоматия. под ред. М., 1989 .</li> <li>12. Рисунок фигуры человека. Техника и материалы, под ред. Грегга Элберга, М., 1998.</li> </ol>



1. 0403/B42	2. Արվեստի պատմություն-2 /ՀԲ	3. 6. ECTS կրեդիտ
4. 6 ժամ/շաբ.	5. 78/0/12	
6. 4-րդ կիսամյակ	7. Եզրափակիչ գնահատումով	
<p><b>8. Դասընթացի նպատակն է</b> ուսանողներին անհրաժեշտ գիտելիքներ հաղորդել արևմտաեվրոպական երկրների՝ Իտալիայի, Նիդեռլանդների, Գերմանիայի, Ֆրանսիայի և Իսպանիայի վերածնության դարաշրջանի արվեստի, XVII դարի եվրոպական առաջատար գեղարվեստական դպրոցների, XVIII-XIX դդ. Եվրոպական արվեստի և ոճական ուղղությունների մասին, ձևավորել գիտելիքներ XIX-XXI դդ. արևմտաեվրոպական և ռուսական գեղարվեստական ուղղությունների /ռեալիզմ, իմպրեսիոնիզմ, պոստիմպրեսիոնիզմ, սիմվոլիզմ, մոդեռնի /էքսպրեսիոնիզմ, կուբիզմ, աբստրակցիոնիզմ, ֆովիզմ, ֆուտուրիզմ, դադաիզմ, սյուրռեալիզմ/, պոստմոդեռնիզմ/վիդեո-արտ, պերֆորմանս, գրաֆֆիտ, կոնցեպտուալ արվեստ, բոդի արտ, կինետիկ արվեստ, սկեյչոնիզմ, ֆլեշմոբ//, մասնավոր հավաքածուների և աճուրդի տների, XX-XXI դդ. ճարտարապետության և քանդակագործության հիմնական միտումների վերաբերյալ, ծանոթացնել XVIII-XXI դդ. հայ արվեստի պատմությանը, առանձնահատկություններին Հայաստանում և Սփյուռքում, ցույց տալ հայ ստեղծագործ մտքի տեղն ու դերը տվյալ ժամանակաշրջանի արվեստում:</p> <p><b>Դասընթացի խնդիրները.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. ուսանողներին ընկալելի դարձնել XV-XIX դդ. արվեստի պատմության օրինաչափությունները, մոդեռնիստական, պոստմոդեռնիստական ուղղությունները, դրանց զարգացման առանձնահատկությունները,</li> <li>2. ուսանողներին ծանոթացնել XV-XIX դդ. արվեստի կարևոր հուշարձաններին և համաշխարհային հռչակ վայելող արվեստագետների ստեղծագործություններին:</li> </ol>		
<p><b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. ներկայացնելու XV-XXI դդ. արվեստի պատմության ուսումնասիրության առարկան, դրա զարգացման առանձնահատկությունները, տեղն ու դերը համաշխարհային քաղաքակրթության մեջ,</li> <li>2. մատնանշելու XV-XXI դդ. համաշխարհային արվեստի հիմնական շրջանները, ոճերը,</li> <li>3. թվարկելու XV-XXI դդ. արվեստի հանրահայտ արվեստագետներին և նրանց գլուխգործոցները:</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. վերլուծելու նշված դարաշրջանների հայ և համաշխարհային հանրահայտ արվեստագետների ստեղծագործությունները, նշելու նրանց տեղն ու դերը համաշխարհային մշակույթի զարգացման մեջ,</li> <li>2. բացատրելու և հիմնավորելու արվեստի դաստիարակության պատմական դերը,</li> <li>3. ներկայացնելու XV-XXI դդ. հայ և համաշխարհային արվեստների պատմությունը մշակութային միջոցառումների, բանավեճերի ժամանակ:</li> </ol> <p><b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. համեմատելու և գնահատելու XV-XXI դդ. արտասահմանյան և հայ առաջատար արվեստագետների գործունեությունը,</li> <li>2. իրականացնելու ստեղծագործությունների դիտում, հետազոտական արդյունքների ամփոփում:</li> </ol>		

<p><b>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b></p> <p><b>Ա1.</b> Նկարագրելու հայ, համաշխարհային և դեկորատիվ-կիրառական արվեստի զարգացման կարևոր պատմական փուլերը և դրանց օրինաչափությունները, դասակարգելու և համեմատելու տարբեր ժամանակաշրջանների ստեղծագործությունները:</p> <p><b>Ա2.</b> Ճանաչելու արվեստի ակնառու գործիչների ստեղծագործությունները և դասակարգելու ըստ արվեստի տեսակների և ժանրերի:</p> <p><b>Գ5.</b> Վարելու մասնագիտական գործնական բանակցություններ՝ ցուցաբերելով դեկորատիվ-կիրառական արվեստի կրթական և արտադրական ոլորտային խնդիրները լուծելու կարողություն:</p>
<p><b>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b></p> <p><b>Ա1</b> Միջավայրի, արդյունաբերական և հագուստի դիզայնի խնդիրների լուծման ընթացքում ցուցաբերել գեղագիտության, արվեստի և դիզայնի տեսության ու պատմության իմացություն:</p> <p><b>Ա2</b> Ներկայացնելու դիզայնի ոլորտի արդի և հիմնարար հասկացությունները, տեսությունները և մեթոդները առաջադեմ գիտելիքների հետ միասին:</p> <p><b>Գ2</b> Աշխատել թիմում, արդյունավետ շփվել գործընկերների, ղեկավարության և պատվիրատուների հետ, պատասխանատվություն կրել թիմի աշխատանքի արդյունքների համար:</p> <p><b>Գ4</b> Մասնագիտական խնդիրների արդյունավետ լուծման նպատակով իրականացնել անհրաժեշտ տեղեկատվության որոնում՝ օգտագործելով տեղեկատվական եւ հաղորդակցման տեխնոլոգիաները:</p>
<p><b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնասիրության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. խոսքային մեթոդները (դասախոսություն, բացատրում, պատմում և այլն),</li> <li>2. գննական մեթոդները (դիդակտիկ նյութերի ցուցադրում, դիտում և այլն),</li> <li>3. գործնական մեթոդները (ինքնուրույն առաջադրանքի կատարում և այլն),</li> <li>4. ճանաչողական-ստեղծագործական մեթոդները (բացատրական-ցուցադրական, պրոբլեմային-որոնողական),</li> <li>5. ինտերակտիվ-կառուցողական մեթոդները (բանավեճ, աշխատանք բնագրի հետ և այլն):</li> </ol>
<p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <p><b>Գնահատվում է եզրափակիչ գնահատումով՝</b> առավելագույն 20 միավոր՝ երկու ընթացիկ քննություններով՝ 8 միավոր՝ յուրաքանչյուրը 0-4 միավոր արժեքով, 0-4 միավոր տրվում է ինքնուրույն աշխատանքների համար և եզրափակիչ քննությանը տրվում է 0-8 միավոր /նախապես տրամադրված հարցաշարերի հարցերի շուրջ բանավոր քննություն: Հարցատոմսը պարունակում է 4 հարց՝ յուրաքանչյուրը՝ 2-ական միավոր/:</p>
<p><b>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b></p> <p><b>Համաշխարհային արվեստի պատմություն</b></p> <p><b>Թեմա 1.1</b> Վերածննդի արվեստը Իտալիայում: <b>Թեմա 1.2</b> Պրոտոռենեսանս: Վաղ վերածնունդ: <b>Թեմա 1.3</b> Բարձր վերածնունդ: <b>Թեմա 1.4</b> Վերածնունդը Վենետիկում: <b>Թեմա 1.5</b> Հյուսիսային վերածնունդ. Վերածննդի արվեստը Նիդեռլանդներում, Գերմանիայում և Ֆրանսիայում: <b>Թեմա 1.6</b> Ռուսական արվեստը XV–XVII դդ.: <b>Թեմա 1.7</b> Եվրոպական արվեստը XVII դարում /Իտալիա, Հոլանդիա, Ֆլանդրիա, Իսպանիա, Ֆրանսիա/: <b>Թեմա 1.8</b> XVIII–XIX դդ եվրոպական արվեստը /Ֆրանսիա, Անգլիա, Իսպանիա/: <b>Թեմա 1.9</b> Ռուսական արվեստը XIX դարի սկզբին: <b>Թեմա 1.10</b> Ռուսական արվեստը XIX դարի վերջին. ռուս ռեալիստ նկարիչները /պերեդվիժնիկներ/: <b>Թեմա 1.11.</b> Ֆրանսիական արվեստը XIX դարի վերջին /իմպրեսիոնիզմ, պոստիմպրեսիոնիզմ/: <b>Թեմա 1.12.</b> XX դարի մոդեռնիստական ուղղությունները /Անրի Մատիս, Պաբլո Պիկասո, Մալվադոր Դալի/: <b>Թեմա 1.13.</b> Ռուսական արվեստը XIX–XX դդ. սահմանագլխին. /«Ռուս նկարիչների միություն», «Միր իսկուսստվա», «Գոլուբայա Ռոզա», «Բուբնովի վալետ» խմբավորումները, ռուսական ավանգարդը. Վ.Կանդինսկի, Կ.Մալեվիչ, Մ.Շագալ/: <b>Թեմա 1.14</b> XXI դարի սկզբի արվեստի հիմնական ուղղությունները:</p> <p><b>Հայ արվեստի պատմություն</b></p> <p><b>Թեմա 2.1</b> Հովնաթանյաններ: <b>Թեմա 2.2.</b> Հայաստանի արվեստը XIX դարում / Շ. Այվազովսկի,Գ. Բաշինջաղյան, Վ. Սուրենյանց/: <b>Թեմա 2.3</b> Հայկական արվեստը XIX դ. վերջին և XX դարակզբին /Շ. Արծաթապանյան, Մ. Աղաջանյան, Փ. Թերլեմեզյան, Ե. Թադևոսյան, Վ. Խոջաբեկյան, Վ. Գայֆեճյան, Գ. Յակոբով, Ե. Ոսկան, Շ. Գյուրջյան/: <b>Թեմա 2. 4.</b> Հայաստանի XX դարի առաջին կեսի արվեստը /Ա. Թամանյան, Մ. Մարյան, Շ. Կոչոյան, Ա. Մարգարյան, Ե. Քոչար, Է. Իսաբեկյան/: <b>Թեմա 2. 5</b> Հայաստանի XX դարի երկրորդ կեսի արվեստը /Շ. Զարգարյան, Գ. Խանջյան, Մ. Ավետիսյան, Ա. Շիրազ, հայկական գրաֆիկական, գրքային նկարազարդումներն ու պլակատը/: <b>Թեմա 2.6</b> Միյուրոքահայ նկարիչներ /Էդգար Շահին, Գառու, Արշիլ Գորկի, Ռ. Շիշմանյան, Ժանսեմ/: <b>Թեմա 2.7</b> Արդի հայ արվեստ:</p>

**14. Հիմնական գրականության ցանկ.**

1. Հակոբյան Հ., Հասարակական Վ., Համաշխարհային և հայ պատմության ուղեցույց, Եր., 2005:
2. Կուզմինա Մ., Մալցևա Ն., Արտասահմանյան արվեստի պատմություն, Եր., 2003:
3. Աղասյան Ա., Հակոբյան Հ., Հասարակական Մ., Ղազարյան Վ., Հայ արվեստի պատմություն, Ե. , 2009:
4. Մկրտչյան Շ., Լեոնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները, Ե. , 1985:
5. Թորամանյան Թ., Նյութեր հայկական ճարտարապետության պատմություն, հ.2, Եր., 1942:
6. Մարտիկյան Ե., Հայկական կերպարվեստի պատմություն, գիրք Ա,Բ,Գ, Եր., 1971-1978:
7. Հակոբյան Հ., Կորիմագյան Է, Հայկական մանրանկարչություն, Եր., 1987:
8. Колпинский Ю.Д., Памятники мирового искусства, т.7, т.8, М., 1971-1987.

1. 0404/B27	2. Գործվածքի գեղարվեստական ձևավորում-4	3. 4 ECTS կրեդիտ
4. 4 ժամ/շաբ.	5. 8/52/0	
6. 5-րդ կիսամյակ	7. Առանց ընթացիկ քննությունների գնահատման	
<p><b>8. Դասընթացի նպատակն է՝</b></p> <p>ուսանողին սովորեցնել տարբեր եղանակներով նկարագարող գործվածքներ /հանգուցային, դաջվածքային, սառը բատիկ, տաք բատիկ/:</p> <p><b>Դասընթացի խնդիրները՝</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• սովորեցնել ճանաձևեր և տարբերակել բատիկի համար նախատեսված գործիքներն ու նյութերը,</li> <li>• սովորեցնել կառուցել գործվածքի գեղարվեստական նկարագարող համար տեխնիկական նկարներ՝ հաշվի առնելով առանձնահատկությունները և զարդամոտիվները,</li> <li>• ստեղծել բատիկի եղանակով կատարված ստեղծագործական աշխատանքներ /գլխաշոր-վզկապ, սփռոցներ, պաննո/:</li> </ul>		
<p><b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. ճանաչելու բատիկի տեսակները ըստ կատարման եղանակի,</li> <li>2. ճանաչելու բատիկի նյութերը և բացատրելու դրանց առանձնահատկությունները,</li> <li>3. ներկայացնելու բատիկի զարգացման պատմությունը:</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. էքսիզների կամ այլ պատկերների հիման վրա կառուցելու գործվածքի գեղարվեստական նկարագարող ման տեխնիկական նկարներ և օգտվելու դրանցից,</li> <li>2. գործվածքի գեղարվեստական նկարագարող ման աշխատանքներում կիրառելու նյութերն ու գործիքները,</li> <li>3. տաք բատիկի համար պատրաստելու պարաֆինային խառնուրդ,</li> <li>4. կատարելու գործվածքի գեղարվեստական նկարագարող ման գործնական աշխատանքներ:</li> </ol> <p><b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>5. պահպանելու անվտանգության կանոնները:</li> </ol>		
<p><b>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնադրույթները.</b></p> <p><b>Ա1.</b> Նկարագրելու հայ, համաշխարհային և դեկորատիվ-կիրառական արվեստի զարգացման կարևոր պատմական փուլերը և դրանց օրինաչափությունները, դասակարգելու և համեմատելու տարբեր ժամանակաշրջանների ստեղծագործությունները:</p> <p><b>Ա3.</b> Բացատրելու ԴԿԱ (գործվածքի, մետաղի, փայտի գեղարվեստական ձևավորման, մանրանկարի, խեցեգործության, տարազի, տիկնիկագործություն, ապակենկարչություն) առարկաների ստեղծման տեխնոլոգիաները և մեթոդները:</p> <p><b>Բ2.</b> Դեկորատիվ-կիրառական արվեստի առարկաների նախագծման և էքսիզավորման աշխատանքներում ցուցադրելու նկարչության հնարները և բացատրելու դրանց ընտրությունը:</p> <p><b>Բ3.</b> Դեկորատիվ-կիրառական արվեստի առարկաների ստեղծման աշխատանքներում մշակելու և կիրառելու ազգային զարդարվեստի մոտիվները, մեկնաբանելու դրանց իմաստային նշանակությունը:</p> <p><b>Բ4.</b> Ստեղծելու և վերարտադրելու դեկորատիվ-կիրառական արվեստի առարկաներ՝ ինքնուրույն ընտրելով տեխնիկական և տեխնոլոգիական կատարման եղանակները:</p> <p><b>Բ7.</b> Հիմնվելով ԴԿԱ ոլորտի արդի և հիմնարար գիտելիքների վրա՝ կազմակերպելու սեփական մասնագիտական գործունեությունը:</p> <p><b>Գ1.</b> Հայերեն և երկու օտար լեզուներով զրավոր և բանավոր ներկայացնելու մասնագիտական նախագծեր</p>		

<p>մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը և ցուցաբերելու հաղորդակցման կարողություն՝ հաշվի առնելով դեկորատիվ-կիրառական արվեստում միջօշակությային, սոցիալական ու անձնային փոխադրեցության գործոնները:</p> <p><b>Գ2.</b> Աշխատելու թիմում, արդյունավետ շփվելու գործընկերների, դեկավարության և պատվիրատուների հետ, պատասխանատվություն կրելու սեփական և թիմի աշխատանքի արդյունքների և կայացրած որոշումների համար՝ պահպանելով էթիկայի նորմերը:</p>		
<p><b>11. Գիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. խոսքային մեթոդները (դասախոսություն, բացատրում, պատմում և այլն),</li> <li>2. գնական մեթոդները (դիդակտիկ նյութերի ցուցադրում, դիտում և այլն),</li> <li>3. գործնական մեթոդները (ինքնուրույն առաջադրանքի կատարում և այլն),</li> <li>4. ճանաչողական-ստեղծագործական մեթոդները (բացատրական-ցուցադրական, պրոբլեմային-որոնողական),</li> <li>5. ինտերակտիվ-կառուցողական մեթոդները (բանավեճ, աշխատանք բնագրի հետ և այլն):</li> </ol>		
<p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <p>Առարկան գնահատվում է <b>առանց ընթացիկ քննությունների գնահատման</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. ինքնուրույն աշխատանքներ՝ 0-8 միավոր,</li> <li>2. մասնակցություն՝ 0-3 միավոր,</li> <li>3. եզրափակիչ քննություն՝ 0-9 միավոր:</li> </ol>		
<p><b>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b></p> <p><b>Ներածություն:</b> <b>Թեմա 1.</b> Բատիկը որպես դեկորատիվ-կիրառական արվեստի տեսակ, նրա ծագումը, զարգացման պատմությունը: <b>Թեմա 2.</b> Գործվածքների նկարագրողական հանգուցային եղանակները: <b>Թեմա 3.</b> Գործվածքների նկարագրողական դաջվածքային եղանակները: <b>Թեմա 4.</b> Մառը բատիկի տեխնիկական կիրառումը գործվածքների նկարագրողական մեջ: <b>Թեմա 5.</b> Գործվածքների նկարագրողումը տաք բատիկի եղանակով: Բոլոր գործնական աշխատանքները կատարվում են դասախոսի կողմից հաստատված նախանկարների հիման վրա:</p>		
<p><b>14. Հիմնական գրականության ցանկ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Зотова Н. В., Батик. Роспись по ткани + DVD, Уч. пособие, Санкт-Петербург, 2019.</li> <li>2. Соколова О., Волшебный мир батика, Феникс, Ростов-на- дону 2013.</li> <li>3. Перелешина И., Батик. От основ к импровизации. Законы композиции и цвета. Холодный батик. Горячий батик и др, Паритет, М., 2008.</li> <li>4. Дворкина И. А., Батик. Холодный. Горячий. Узелковый, М.: Радуга, 2008.. <a href="https://www.books.ru/batik-9000333/?lite=1">https://www.books.ru/batik-9000333/?lite=1</a></li> </ol>		

<b>1.0404/ B28</b>	<b>2. Խեցեգործություն-1</b>	<b>3.4 ECTS կրեդիտ</b>
<b>4.4 Ժամ/շաբ.</b>	<b>5.4/56/0</b>	
<b>6.5-րդ կիսամյակ</b>	<b>7.7. Առանց ընթացիկ քննությունների գնահատման</b>	
<p><b>8. Դասընթացի նպատակն է</b> որպես դեկորատիվ-կիրառական արվեստի մի ճյուղի ուսանողների ծանոթացնել խեցեգործությանը՝ ապահովելով ժամանակակից տեխնոլոգիաներով աշխատելու անհրաժեշտ հմտություններ և գիտելիքներ:</p> <p><b>Դասընթացի խնդիրները.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. ծանոթացնել խեցեգործության ծագման և զարգացման պատմությանը,</li> <li>2. ձևավորել ազգային մտածելակերպ՝ ծանոթացնելով պատմական հայկական խեցեգործական իրերի նշանակությանը, ազգային առանձնահատկություններին,</li> <li>3. ուսանողների մոտ զարգացնել ստեղծագործական մտածողություն, ծավալատարածական ձևերի որոնման և պատկերման կարողություններ:</li> </ol>		
<p><b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. մեկնաբանելու խեցեգործության ծագման պատմությունը,</li> <li>2. բացատրելու պատրաստվող իրերի նախագծային կանոնները,</li> <li>3. բացատրելու և նկարագրելու խեցեգործական մի քանի տեխնոլոգիաները /թրծում, ջնարակում/,</li> <li>4. բացատրելու առարկայական տերմինաբանությունը,</li> <li>5. ներկայացնելու խեցեգործության մեջ գործածվող նյութերի ֆիզիկական և քիմիական հատկությունները:</li> </ol>		

**բ. գործնական մասնագիտական կարողություններ**

1. ստեղծագործական աշխատանքներում ցուցադրելու պլաստիկ մասսայի պատրաստման, բրուտագործական հաստոցի օգտագործման, խազային նախշագարդման, չորացման, թրծման, ջնարակման եղանակները:
2. նախագծելու և խեցեգործական մի քանի տեխնոլոգիաներով պատրաստելու խեցեգործական առարկաներ:

**գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ.**

1. պահպանելու խեցեգործական վառարանների և հաստոցների շահագործման անվտանգության կանոնները:

**10.Պասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

**Ա1.** Նկարագրելու հայ, համաշխարհային և դեկորատիվ-կիրառական արվեստի զարգացման կարևոր պատմական փուլերը և դրանց օրինաչափությունները, դասակարգելու և համեմատելու տարբեր ժամանակաշրջանների ստեղծագործությունները:

**Ա2.** Ճանաչելու արվեստի ակնառու գործիչների ստեղծագործությունները և դասակարգելու ըստ արվեստի տեսակների և ժանրերի:

**Ա3.** Բացատրելու ԴԿԱ (գործվածքի, մետաղի, փայտի գեղարվեստական ձևավորման, մանրանկարի, խեցեգործության, տարազի, տիկնիկագործություն, ապակենկարչություն) առարկաների ստեղծման տեխնոլոգիաները և մեթոդները:

**Բ3.** Դեկորատիվ-կիրառական արվեստի առարկաների ստեղծման աշխատանքներում մշակելու և կիրառելու ազգային զարդարվեստի մոտիվները, մեկնաբանելու դրանց իմաստային նշանակությունը:

**Բ4.**Ստեղծելու և վերարտադրելու դեկորատիվ-կիրառական արվեստի առարկաներ՝ ինքնուրույն ընտրելով տեխնիկական և տեխնոլոգիական կատարման եղանակները:

**Բ5.** Հիմնավորելու սեփական կոնցեպտուալ նախագծերի լուծումները:

**Բ6.** Պատճենելու ԴԿԱ (մետաղի, փայտի, գործվածքի գեղարվեստական ձևավորման, մանրանկարի, խեցեգործության) առարկաներ:

**Գ1.** Հայերեն և երկու օտար լեզուներով գրավոր և բանավոր ներկայացնելու մասնագիտական նախագծեր մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը և ցուցաբերելու հաղորդակցման կարողություն՝ հաշվի առնելով դեկորատիվ-կիրառական արվեստում միջմշակութային, սոցիալական ու անձնային փոխազդեցության գործոնները:

**11.Կիրառվում են դասավանդման և ուսումնասության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. խոսքային մեթոդները,
2. գննական մեթոդները,
3. գործնական մեթոդները,
4. հետաքրքրությունների խթանման մեթոդները,
5. ինտերակտիվ-կառուցողական մեթոդները,
6. համագործակցային ուսուցման մեթոդները,
7. խմբային աշխատանքի մեթոդները,
8. ինքնուրույն աշխատանքի մեթոդները,
9. վերահսկողության մեթոդները:

**12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

Պասընթացը գնահատվում է առանց ընթացիկ քննությունների գնահատման

1. ինքնուրույն աշխատանքներ՝ 0-8 միավոր,
2. մասնակցություն՝ 0-3 միավոր,
3. եզրափակիչ քննություն՝ 0-9 միավոր:

**13.Պասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**Ներածություն Թեմա 1.** Ընդհանուր հասկացություն խեցեգործության մասին: **Թեմա 2.** Էսքիզների նախագծման հիմունքները: **Թեմա 3.** Խեցեգործության մեջ գործածվող նյութերի ֆիզիկական և քիմիական հատկությունները: **Թեմա 4.** Խեցեգործական նմուշների պատրաստման եղանակները: **Թեմա 5.** Անվտանգության կանոնների պահպանման կարևորությունը: **Թեմա 6.** Զարդանախշի կիրառումը խեցեգործական արվեստում: **Թեմա 7.** Դեկորատիվ աղաման: **Թեմա 8.** Նկարագարդ սկուտեղներ և պաննոներ:

**14. Հիմնական գրականության ցանկ.**

1. Բրդյան Վ. Հ., Հայկական աղամաններ, Երևան 1986:
2. Акунова П. Ф., Крапивина В. А., Технология производства и декорирование художественных керамических изделий, Москва, Высшая школа, 1984.
3. Августиник А. И., Керамика, Л., 1975.
4. Джеки Эткин, Керамика для начинающих, М., 2006.
5. Долорес Рос, Керамика техники Приемы, М., 2003.
6. Хойким Чаварра, Керамика своими руками, М., 2004.
7. А. И. Миклашевский, Технология художественной керамики, Л., 1971.
8. В. А. Малолетков, Керамика, часть первая, М., 2001, Керамика, советы начинающих часть второе, М., 2001.
9. М. Пилар Новарро, Декорирование керамики, Ниола 21 век. 2005.
10. Геннадий Федотов, Глина и керамика, МСПЕ, 2005.
11. Диана Фишар, Расписываем керамику, М., 2006.
12. <https://commons.wikimedia.org/wiki/Category:Pottery?uselang=hy>

<b>1.0404/ B29</b>	<b>2.Մետաղի գեղարվեստական մշակում-2</b>	<b>3.2 ECTS կրեդիտ</b>
<b>4.4 ժամ/շաբ.</b>	<b>5.2/28/0</b>	
<b>6. 5-րդ կիսամյակ</b>	<b>7.Առանց եզրափակիչ գնահատման</b>	
<p><b>8.Դասընթացի նպատակն է</b> որպես դեկորատիվ-կիրառական արվեստի մի ճյուղի ուսանողներին ծանոթացնել մետաղի գեղարվեստական մշակմանը՝ ապահովելով անհրաժեշտ հմտություններ մետաղի դիզայնի, մոդելավորման և մշակման գործընթացներում: Ինչպես նաև ծանոթացնել հայտնի վարպետների աշխատանքներին և ժամանակակից առաջադեմ ձեռնարկություններին:</p> <p><b>Դասընթացի խնդիրները.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. ծանոթացնել մետաղամշակման մեջ կիրառվող քիմիական միջոցներին,</li> <li>2. իրերի իրականացում նյութով՝ կիրառելով համապատասխան եղանակները /Գլանման սարքի օգտագործման եղանակ, փուքսով թավվում, ապակի, գունավոր կավ, բնական և այլ քարատեսակներ, կաշի, փայտ, գոդում/,</li> <li>3. ծանոթացնել հավաքման աշխատանքներին,</li> <li>4. ծանոթացնել քարի գամման եղանակներին և փայլեցման աշխատանքներին:</li> </ol>		
<p><b>9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. բացատրելու քիմիական միջոցների օգտագործման եղանակները,</li> <li>2. բացատրելու ոսկերչական և արծաթագործական իրերի իրականացման եղանակները:</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. ստեղծագործական աշխատանքներում ցուցադրելու տարբեր նյութերով աշխատելու կարողություն,</li> <li>2. ստեղծագործական աշխատանքներում ցուցադրելու քարի գամման և փայլեցման եղանակները:</li> </ol>		
<p><b>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b></p> <p><b>Ա1.</b> Նկարագրելու հայ, համաշխարհային և դեկորատիվ-կիրառական արվեստի զարգացման կարևոր պատմական փուլերը և դրանց օրինաչափությունները, դասակարգելու և համեմատելու տարբեր ժամանակաշրջանների ստեղծագործությունները:</p> <p><b>Ա2.</b> Ճանաչելու արվեստի ակնառու գործիչների ստեղծագործությունները և դասակարգելու ըստ արվեստի տեսակների և ժանրերի:</p> <p><b>Ա3.</b> Բացատրելու ԴԿԱ (գործվածքի, մետաղի, փայտի գեղարվեստական ձևավորման, մանրանկարի, խեցեգործության, տարազի, տիկնիկագործություն, ապակենկարչություն) առարկաների ստեղծման տեխնոլոգիաները և մեթոդները:</p> <p><b>Բ3.</b> Դեկորատիվ-կիրառական արվեստի առարկաների ստեղծման աշխատանքներում մշակելու և կիրառելու ազգային զարդարվեստի մոտիվները, մեկնաբանելու դրանց իմաստային նշանակությունը:</p> <p><b>Բ4.</b>Ստեղծելու և վերարտադրելու դեկորատիվ-կիրառական արվեստի առարկաներ ինքնուրույն ընտրելով տեխնիկական և տեխնոլոգիական կատարման եղանակները:</p> <p><b>Բ5.</b> Հիմնավորելու սեփական կոնցեպտուալ նախագծերի լուծումները:</p> <p><b>Բ6.</b> Պատճենելու ԴԿԱ (մետաղի, փայտի, գործվածքի գեղարվեստական ձևավորման, մանրանկարի, խեցեգործության) առարկաներ:</p> <p><b>Գ1.</b> Հայերեն և երկու օտար լեզուներով գրավոր և բանավոր ներկայացնելու մասնագիտական նախագծեր</p>		

<p>մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը և ցուցաբերելու հաղորդակցման կարողություն՝ հաշվի առնելով դեկորատիվ-կիրառական արվեստում միջնակության, սոցիալական ու անձնային փոխազդեցության գործոնները:</p> <p><b>Գ4.</b> Մասնագիտական խնդիրների արդյունավետ լուծման նպատակով իրականացնելու անհրաժեշտ տեղեկատվության որոնում՝ օգտագործելով տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաները:</p> <p><b>Գ5.</b> Վարելու մասնագիտական գործնական բանակցություններ՝ ցուցաբերելով դեկորատիվ-կիրառական արվեստի կրթական և արտադրական ոլորտային խնդիրները լուծելու կարողություն:</p>
<p><b>11. Գիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <p>1. խոսքային մեթոդները, 2. գննական մեթոդները, 3. գործնական մեթոդները, 4. հետաքրքրությունների խթանման մեթոդները, 5. ինտերակտիվ-կառուցողական մեթոդները, 6. համագործակցային ուսուցման մեթոդները, 7. ինքնուրույն աշխատանքի մեթոդները, 8. վերահսկողության մեթոդները:</p>
<p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <p><b>Գնահատվում է առանց եզրափակիչ գնահատման՝</b> առավելագույն 20 միավոր՝ երկու ընթացիկ քննություններով՝ 9 միավոր, որից 1-ին ընթացիկին տրվում է 0-4, իսկ 2-րդին՝ 0-5 միավոր: Ընթացքում իրականացվող ընթացիկ ստուգումներին տրվում է 0-4 միավոր, ինքնուրույն աշխատանքների համար՝ 0-4 միավոր և 0-3 միավոր տրվում է մասնակցության համար:</p>
<p><b>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b></p> <p><b>Թեմա 1.</b> Ծանոթացում քիմիական և այլ միջոցների հետ: <b>Թեմա 2.</b> Էսքիզի կատարման փուլում թեմայի ընտրություն /ա. դեկորատիվ զարդեր, բ. դեկորներ ինտերիերի և էքստերիերի համար, գ. մոդեռն և արստրակտ ոճի զարդեր, դ. հուշանվերներ/: <b>Թեմա 3.</b> Իրերի իրականացում նյութով՝ կիրառելով համապատասխան եղանակները /Գլանման սարքի օգտագործման եղանակ, փուքսով թավվում, ապակի, գունավոր կավ, բնական և այլ քարատեսակներ, կաշի, փայտ, գոդում/ <b>Թեմա 4.</b> Հավաքման աշխատանքներ: Քարի գամում: Փայլեցում:</p>
<p><b>14. Հիմնական գրականության ցանկ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Ա. Բ. Գևորգյան, Արհեստներն ու կենցաղը հայկական մանրանկարներում, Երևան, 1973:</li> <li>2. Ա. Ա. Դավթյան, Դրվագներ հայկական միջնադարյան կիրառական արվեստի պատմությունից, Երևան, 1981:</li> <li>3. А. Гилюдо, О. Иглина, Современное ювелирное искусство, М., 2004.</li> <li>4. Б. Т. Никифоров, В. В. Чернов, Ювелирное искусство, высшее образование, 2006.</li> <li>5. В. А. Абрамян, Ювелирное искусство Армении, С ДРЕВНЕЙШИХ ВРЕМЕН ДО НАШИХ ДНЕЙ, 1983.</li> <li>6. В. И. Марченков, Ювелирное дело, Практическое пособие, 3-е изд, перераб. и доп., М., 1992.</li> <li>7. Д. Стоун, Ювелирная энциклопедия. Драгоценные камни, виды изделий, Издательский дом Кристалл, Санкт-Петербург, 2008.</li> <li>8. С. В. Простаков, Ювелирное дело - учебный курс, Издательство: Ростов н/Д., Феникс, 1999.</li> <li>9. С. Н. Зубрилина, Справочник по ювелирному делу, Издательство: Ростов н/Д., Феникс, 2006.</li> <li>10. Э. Бреполь, Теория и практика ювелирного дела, М., Книга по Требованию, 2013.</li> </ol>

<b>1.0404/ B30</b>	<b>2.Մանրանկարչություն-1 /ՀԲ</b>	<b>3.4 ECTS կրեդիտ</b>
<b>4.4 ժամ/շաբ.</b>	<b>5.10/50/0</b>	
<b>6. 5-րդ կիսամյակ</b>	<b>7. Եզրափակիչ գնահատումով</b>	
<p><b>8. Դասընթացի նպատակն է</b> ծանոթացնել հայկական մանրանկարչության պատմությանը, դպրոցներին և ուղղություններին: Կատարել մանրանկարների կրկնօրինակներ և ստեղծագործական աշխատանքներ: Ծանոթացնել հետազոտական աշխատանք կատարելու մեթոդներին:</p> <p><b>Դասընթացի խնդիրները.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. ուսումնասիրել հայկական մանրանկարչական դպրոցների ոճական առանձնահատկությունները,</li> <li>2. կատարել բուսական, երկրաչափական, կենդանական և մարդակերպ զարդամոտիվների կրկնօրինակներ,</li> <li>3. ստեղծել նոր զարդամոտիվներով մանրանկարներ:</li> </ol>		
<p><b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. ճանաչելու տարբեր հայկական մանրանկարչական դպրոցների ոճական առանձնահատկությունները,</li> <li>2. ճանաչելու տարբեր հայկական մանրանկարչական դպրոցների մանրանկարիչներին և</li> </ol>		

<p>ստեղծագործությունները:</p> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>կրկնօրինակելու տարբեր բուսական, երկրաչափական, կենդանական և մարդակերպ զարդամոտիվներ,</li> <li>ստեղծագործական աշխատանքներում օգտագործելու հայկական ավանդական մանրանկարների զարդերն ու մոտիվները,</li> <li>ստեղծագործական աշխատանքներում պահպանելու մանրանկարի պատկերագրման կարգը:</li> </ol> <p><b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>կատարելու ինքնուրույն և խմբային հետազոտական աշխատանք և արդյունքները ներկայացնելու տպագիր կամ էլեկտրոնային ձևավորված տարբերակով:</li> </ol>
<p><b>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b></p> <p><b>Ա1.</b> Նկարագրելու հայ, համաշխարհային և դեկորատիվ-կիրառական արվեստի զարգացման կարևոր պատմական փուլերը և դրանց օրինաչափությունները, դասակարգելու և համեմատելու տարբեր ժամանակաշրջանների ստեղծագործությունները:</p> <p><b>Ա2.</b> Ճանաչելու արվեստի ակնառու գործիչների ստեղծագործությունները և դասակարգելու ըստ արվեստի տեսակների և ժանրերի:</p> <p><b>Ա3.</b> Բացատրելու ԴԿԱ (գործվածքի, մետաղի, փայտի գեղարվեստական ձևավորման, մանրանկարի, խեցեգործության, տարազի, տիկնիկագործություն, սպակենկարչություն) առարկաների ստեղծման տեխնոլոգիաները և մեթոդները:</p> <p><b>Բ3.</b> Դեկորատիվ-կիրառական արվեստի առարկաների ստեղծման աշխատանքներում մշակելու և կիրառելու ազգային զարդարվեստի մոտիվները, մեկնաբանելու դրանց իմաստային նշանակությունը:</p> <p><b>Բ4.</b> Ստեղծելու և վերարտադրելու դեկորատիվ-կիրառական արվեստի առարկաներ՝ ինքնուրույն ընտրելով տեխնիկական և տեխնոլոգիական կատարման եղանակները:</p> <p><b>Բ5.</b> Հիմնավորելու սեփական կոնցեպտուալ նախագծերի լուծումները:</p> <p><b>Բ6.</b> Պատճենելու ԴԿԱ (մետաղի, փայտի, գործվածքի գեղարվեստական ձևավորման, մանրանկարի, խեցեգործության) առարկաներ:</p> <p><b>Գ1.</b> Հայերեն և երկու օտար լեզուներով գրավոր և բանավոր ներկայացնելու մասնագիտական նախագծեր մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը և ցուցաբերելու հաղորդակցման կարողություն՝ հաշվի առնելով դեկորատիվ-կիրառական արվեստում միջմշակութային, սոցիալական ու անձնային փոխազդեցության գործոնները:</p> <p><b>Գ2.</b> Աշխատելու թիմում, արդյունավետ շփվելու գործընկերների, ղեկավարության և պատվիրատուների հետ, պատասխանատվություն կրելու սեփական և թիմի աշխատանքի արդյունքների և կայացրած որոշումների համար՝ պահպանելով էթիկայի նորմերը:</p> <p><b>Գ5.</b> Վարելու մասնագիտական գործնական բանակցություններ՝ ցուցաբերելով դեկորատիվ-կիրառական արվեստի կրթական և արտադրական ոլորտային խնդիրները լուծելու կարողություն:</p>
<p><b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>խոսքային մեթոդները,</li> <li>գննական մեթոդները,</li> <li>գործնական մեթոդները,</li> <li>հետաքրքրությունների խթանման մեթոդները,</li> <li>ինտերակտիվ-կառուցողական մեթոդները,</li> <li>համագործակցային ուսուցման մեթոդները,</li> <li>խմբային աշխատանքի մեթոդները,</li> <li>ինքնուրույն աշխատանքի մեթոդները,</li> <li>վերահսկողության մեթոդները,</li> <li>Հետազոտական մեթոդները:</li> </ol>
<p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <p>Դասընթացը գնահատվում է <b>եզրափակիչ գնահատումով.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1-ին ընթացիկ՝ 0-4 միավոր,</li> <li>2-րդ ընթացիկը հետազոտական աշխատանք է՝ 0-5 միավոր, գնահատման հետևյալ բաղադրիչներով. <ul style="list-style-type: none"> <li>✓ արդիականություն, ինքնուրույնություն,</li> <li>✓ արդյունքների հիմնավորվածություն, հավաստիություն,</li> <li>✓ արդյունքների որակական վերլուծություն,</li> <li>✓ բանավոր ներկայացում,</li> <li>✓ համապատասխան եզրակացությունների առկայություն,</li> </ul> </li> <li>3. մասնակցություն՝ 0-3 միավոր,</li> <li>4. Եզրափակիչ քննություն՝ 0-8 միավոր:</li> </ol>
<p><b>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b></p> <p><b>Թեմա 1.</b> Ներածություն: Հայկական մանրանկարչական դպրոցները և դրանց ոճային առանձնահատկությունները /Վասպուրական, Կիլիկիա/: <b>Թեմա 2.</b> Երկրաչափական զարդամոտիվներ: <b>Թեմա 3.</b> Բուսական զարդամոտիվներ: <b>Թեմա 4.</b> Կենդանական զարդամոտիվներ: <b>Թեմա 5.</b> Մարդակերպ</p>



<p>գարդամոտիվները խորաններում:</p> <p><b>14. Հիմնական գրականության ցանկ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Ա. Շ. Մնացականյան, Հայկական գարդարվեստ, Եր., 1955:</li> <li>2. Ա. Քյուրքյան, Հայկական գարդարվեստ, Երևան, 2017:</li> <li>3. Հ. Հակոբյան, Վասպուրականի մանրանկարչություն, Երևան, 1982:</li> <li>4. Հ. Հակոբյան, Ս. Ջանիկյան, Հայկական մանրանկարչություն, Երևան, 2019:</li> <li>5. Հ. Վ. Կարազյոզյան, Ն. Ավագյան, Հայկական մանրանկարչություն, Երևան, 1992:</li> <li>6. Ռ. Գ. Դրամբյան Լ. Ա. Դուռնովա, Հայկական մանրանկարչություն, Երևան, 1969:</li> <li>7. Армянская миниатюра XIII-XIV веков в собрании матенадарана, Ереван, Изд. Аврора., Ленинград, 1984.</li> </ol>
--

<b>1. 0404/ B31</b>	<b>2. Փայտի գեղարվեստական մշակում-1</b>	<b>3.4 ECTS կրեդիտ</b>
<b>4. 4 Ժամ/շաբ.</b>	<b>5. 4/56/0</b>	
<b>6. 5-րդ կիսամյակ</b>	<b>7. Առանց ընթացիկ քննությունների գնահատման</b>	
<p><b>8. Դասընթացի նպատակն է որպես դեկորատիվ-կիրառական արվեստի մի ճյուղի ուսանողներին ծանոթացնել փայտի գեղարվեստական մշակմանը՝ ապահովելով անհրաժեշտ հմտություններ փայտի գեղարվեստական ձևավորման և մշակման գործընթացներում, ինչպես նաև ծանոթացնել հայտնի ստեղծագործությունների հետ:</b></p> <p><b>Դասընթացի խնդիրները.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. ծանոթացնել փայտի տեսակների հետ,</li> <li>2. տրամադրել տեղեկատվություն ընդհանուր և հայկական փայտարվեստի պատմությունից և նրա ավանդույթներից,</li> <li>3. սովորեցնել համապատասխան գարդանախշերը կիրառել փայտե մակերևույթների վրա,</li> <li>4. սովորեցնել տեխնիկապես հմուտ կերպով կատարել նախանկարներ երկրաչափական, բուսական և այլ ձևերի ստեղծագործական նյութի մշակման հիման վրա,</li> <li>5. սովորեցնել կատարել գործնական փորագրություններ փայտի գեղարվեստական մշակման պարզ և բարդ եղանակներով:</li> </ol>		
<p><b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. թվարկելու փայտի տեսակները,</li> <li>2. ներկայացնելու ընդհանուր և հայկական փայտարվեստի պատմությունը և նրա ավանդույթները,</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. երկրաչափական, բուսական և այլ ձևերի կիրառմամբ կատարելու նախանկարներ,</li> <li>2. ընտրելու փայտանյութի տեսակները և էսքիզները տեղափոխելու փայտանյութի վրա,</li> <li>3. կատարելու գործնական փորագրություններ փայտի գեղարվեստական մշակման պարզ և բարդ եղանակներով:</li> </ol> <p><b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. պահպանելու փայտամշակման հաստոցների և գործիքների շահագործման անվտանգության կանոնները:</li> </ol>		
<p><b>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b></p> <p><b>Ա1.</b> Նկարագրելու հայ, համաշխարհային և դեկորատիվ-կիրառական արվեստի զարգացման կարևոր պատմական փուլերը և դրանց օրինաչափությունները, դասակարգելու և համեմատելու տարբեր ժամանակաշրջանների ստեղծագործությունները:</p> <p><b>Ա2.</b> Ճանաչելու արվեստի ակնառու գործիչների ստեղծագործությունները և դասակարգելու ըստ արվեստի տեսակների և ժանրերի:</p> <p><b>Ա3.</b> Բացատրելու ԴԿԱ (գործվածքի, մետաղի, փայտի գեղարվեստական ձևավորման, մանրանկարի, խեցեգործության, տարազի, տիկնիկագործություն, ապակենկարչություն) առարկաների ստեղծման տեխնոլոգիաները և մեթոդները:</p> <p><b>Բ3.</b> Դեկորատիվ-կիրառական արվեստի առարկաների ստեղծման աշխատանքներում մշակելու և կիրառելու ազգային գարդարվեստի մոտիվները, մեկնաբանելու դրանց իմաստային նշանակությունը:</p> <p><b>Բ4.</b> Ստեղծելու և վերարտադրելու դեկորատիվ-կիրառական արվեստի առարկաներ՝ ինքնուրույն ընտրելով տեխնիկական և տեխնոլոգիական կատարման եղանակները:</p> <p><b>Բ5.</b> Հիմնավորելու սեփական կոնցեպտուալ նախագծերի լուծումները:</p> <p><b>Բ6.</b> Պատճենելու ԴԿԱ (մետաղի, փայտի, գործվածքի գեղարվեստական ձևավորման, մանրանկարի, խեցեգործության) առարկաներ:</p> <p><b>Գ1.</b> Հայերեն և երկու օտար լեզուներով գրավոր և բանավոր ներկայացնելու մասնագիտական նախագծեր</p>		

<p>մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը և ցուցաբերելու հաղորդակցման կարողություն՝ հաշվի առնելով դեկորատիվ-կիրառական արվեստում միջմշակութային, սոցիալական ու անձնային փոխազդեցության գործոնները:</p> <p><b>Գ4.</b> Մասնագիտական խնդիրների արդյունավետ լուծման նպատակով իրականացնելու անհրաժեշտ տեղեկատվության որոնում՝ օգտագործելով տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաները:</p> <p><b>Գ5.</b> Վարելու մասնագիտական գործնական բանակցություններ՝ ցուցաբերելով դեկորատիվ-կիրառական արվեստի կրթական և արտադրական ոլորտային խնդիրները լուծելու կարողություն:</p>
<p><b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <p>1. խոսքային մեթոդները, 2. գննական մեթոդները, 3. գործնական մեթոդները, 4. հետաքրքրությունների խթանման մեթոդները, 5. ինտերակտիվ-կառուցողական մեթոդները, 6. համագործակցային ուսուցման մեթոդները, 7. ինքնուրույն աշխատանքի մեթոդները, 8. վերահսկողության մեթոդները:</p>
<p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <p>Դասընթացը գնահատվում է <b>առանց ընթացիկ քննությունների գնահատման</b></p> <p>1. ինքնուրույն աշխատանքներ՝ 0-8 միավոր,  2. մասնակցություն՝ 0-3 միավոր,  3. եզրափակիչ քննություն՝ 0-9 միավոր:</p>
<p><b>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b></p> <p><b>Թեմա 1.</b> Ներածություն: Փայտի գեղարվեստական մշակման պատմությունից: <b>Թեմա 2.</b> Հայկական փայտի փորագրության ավանդույթների ուսումնասիրում: Ոճային փորագրությունների տարբերությունը: <b>Թեմա 3.</b> Փայտանյութի տեսակները և ընտրություն: Էսքիզի տեղափոխում նյութի վրա: <b>Թեմա 4.</b> Ծանոթացում երկրաչափական փորագրության տեսակի հետ: /Երկրաչափական զարդամոտիվների էսքիզների կառուցում և մշակում: Երկրաչափական տարբերով ժայավենաձև և վարդնյակաձև գործնական փորագրություն:/ <b>Թեմա 5.</b> Ծանոթացում բուսական կառուցված զարդամոտիվների հորինման կառուցման առանձնահատկություններին: /Բուսական զարդամոտիվների էսքիզների կառուցում և մշակում: Բուսական տարբերով գործնական փորագրություն:/ <b>Թեմա 6.</b> Աշխատանքների պաշտպանիչ շերտի մշակում:</p>
<p><b>14. Հիմնական գրականության ցանկ.</b></p> <p>1. Հ. Ազատյան, Փայտի գեղարվեստական փորագրություն, Հայպետհրատ, 1961 թ.:  2. Ս. Ս. Դավթյան, Դրվագներ հայկական միջնադարյան կիրառական արվեստի պատմությունից, Երևան, 1981:  3. Մ. Ղազարյան, Փայտի գեղարվեստական փորագրությունը Հայաստանում, Երևան, 1990:  4. К. А. Тумаян, Резчикам по дереву, альбом орнаментов, выпуск IX, Москва, народное творчество, 2004.  5. А. В. Мажслим, А. С. Перьмяков, Резчикам по дереву, альбом орнаментов, выпуск VIII, Москва, народное творчество, 2004.  6. И. И. Яковлев, Ю. Д. Орлова, Резба по дереву, Москва, Искусство, 1974.  7. Т. А. Матвеева, Мозайка и резба по дереву, Москва, Высшая школа, 1978.</p>

<b>1. 0403/B43</b>	<b>2. Նկարչություն – 5</b>	<b>3. 10 ECTS կրեդիտ</b>
<b>4. 10 ժամ/շաբ.</b>	<b>5. 14/136/0</b>	
<b>6. 5-րդ կիսամյակ</b>	<b>7. Առանց եզրափակիչ գնահատման</b>	
<p><b>8. Դասընթացի նպատակն է</b> սովորեցնել ուսանողներին կատարել գլխի տարածական, ծավալային պատկերում: Կատարել դեկորատիվ ստեղծագործական աշխատանք: Կատարել ձեպանկարներ, նախանկարներ: Ձևավորել սեփական կարծիք ու վերլուծական մտածողություն:</p> <p><b>Դասընթացի խնդիրները.</b></p> <p>1. գծանկարի միջոցով նկարել նատյուրմորտ՝ գիպսե գլխի առկայությամբ,  2. ուսումնասիրել գիծը, տոնը, լույսը և ստվերը,  3. օգտագործել հեռանկարը՝ որպես ծավալի վերարտադրման արտահայտչամիջոց,  4. տարբեր մեթոդներով ուսումնասիրել դիմանկարը շրջապատում,  5. տիրապետել տարբեր նյութերով աշխատելու տեխնիկաներին,  6. հասկանալ գունանկարի առանձնահատկությունները:</p>		
<p><b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն.</b></p> <p>1. գծանկարի միջոցով նկարելու մարդու գլխի համաչափությունները՝ ցուցադրելով նրա կառուցվածքը,  2. համակցելու գիպսե գլուխը տարբեր առարկաների և կենցաղային իրերի հետ,</p>		

<p>3. բացատրելու գծանկարում ծավալների ստացման տրամաբանությունը և մեթոդները,</p> <p>4. ճանաչելու գեղանկարչության համաշխարհային լավագույն օրինակները,</p> <p>5. բացատրելու գեղանկարում սեփական մտահղացումները, նախանկարներն ու աշխատանքները,</p> <p>6. մասնագիտորեն ճիշտ արտահայտելու, բացատրելու սեփական մտքերը և ստեղծագործությունները:</p> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ.</b></p> <p>1. գծանկարում կառուցելու մարդու գիպսե գլուխ՝ կենցաղային իրերի համադրությամբ,</p> <p>2. կատարելու տոնային, գծային աշխատանք,</p> <p>3. հմտորեն աշխատելու ջրաներկով, յուղաներկով, այլ նյութերով,</p> <p>4. կատարել աշխատանքներ տարբեր նյութականություն ունեցող իրերով՝ պատկերելով բնորոշ հատկությունները:</p>
